Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

32559

N. ~~3144~~
454

32559

N ~~3144~~ 457

Գերապայծառ Տեառն

Տեառն Արիստակէս Ա. Սեդրակեան [illegible]

[illegible]

[illegible]

№ ~~3144~~ 454

ՍԿԵՒՌԱՅ

ՎԱՆՔ, ՎԱՆԱԿԱՆՔ

ԵՒ ՍՐԲԱՐԱՆՆ

1884

32559

ՍԿԵՒՌԱՅ ՎԱՆՔ

Որ ինչ էր Մլճ 'ի համար Պապեռօնի նոյն և Սկեւռայ վանքն Լամբրոնի. այսինքն է դամբանարան տերանց մեծին այնր տանի, այլ և գլխաւոր տեղի աղօթից կամ եկեղեցեաց նահանգին. որոյ սկիզբն և հիմնարկու անծանօթ, այլ թուի զուգաժամանակ բերդին և պայծառութեան նորին, 'ի հաստատել զան Օշնի առաջնոյ զբնակութիւն իւր. Թերևս 'ի Ցունաց իսկ հիմնարկեալ և 'ի նոցանէ առեալ զանունն, եթէ նշանակիցէ ինչ: Որքան ծանօթ է արդ Լամբրոն, այնքան անծանօթ մնայ մենաստանն, 'ի վկայութենէ նախնեաց ծանուցեալ՝ զոլ «առընթեր բերդին». որպէս և երկիցս ասէ Սամուէլ, և «առընթեր հայրենատուր ամրոցի տեա» ռանց մերոց՝ Լամբրոնի». և ըստ վերոյգրելոյդ՝ երևի առ Ագարակի անդ Ցոլանի լինել, որ է ասել ըստ Հռ. Եւ. բերդին: Այլ կրկին էին մենաստանքն. մին՝ բուն վանքն, և միւս՝ Անապատն. յառաջնումն էր Ս. Աստուածածին եկեղեցին մեծ, զոր և ասեն շինեալ Բ Օշնի, հօրն Ս. Ներսիսի, և կարգեալ զնա առաջնորդ տեղւոյն. բայց կամ յառաջ քան զպայազատութիւն իշխանութեանն շինեալ էր զայն Օշնի, և կամ զհօրն և զհաւուն շինած՝ նորոգեալ և փայելչացուցեալ. քանզի և մինչ տղայ էր որդին իւր Սմբատ-Ներսէս, յամի 1153 կամ 1154, և «պատահեաց ախտ ցաւոց, բերաւ 'ի հաւատարիմ ծնո» ղացն և ընծայեցաւ ամենօրհնեալ և միշտ փառաւո» րեալ Աստուածածնին, 'ի տաճար անուան իւրոյ՝ որ 'ի » վանքս Սկեւռայ... (որ և սա) սկսեալ 'ի դեռաբոյս » հասակէն՝ վարժէր յուսումն դպրութեան, ըստ յօժա» րութեան ծնողացն, ընդ այլ եղբարս»: Աստ էր Սուրբն քանամենի յորժամ (1173) Գրիգոր ոմն եկեալ 'ի Հռոմկլայէ՝ յընդօրինակութիւն աւետարանի՝ վասն Կոստանդեայ քահանայի սպասաւորի Ս. Շնորհալւոյն, ասէ. զընտիր օրինակն «Շնորհեաց Ներսէս սուրբ և ընտրեալ » քահանայն, որդի մեծազօր Սևաստոսի Պարոն Օշնի. » որ ամենևին հանգիստ եղև գրչիս տկարութեան՝ յիշր » սեփհական Անապատն Սկեւռայ անուն կոչեցեալ, որ է » մերձ յանառ դղեակն Լամբրոն»: Ցետ հօրն՝ և Հեթում Սեբաստոս անդրանիկ եղբայր Սրբոյն՝ առ ժամանակաւ ձեռնադրութեան սորա յեպիսկոպոսութիւն (1175), «ամենապատիւ փայելչութեամբ շինեալ էր զտա» ճար աղօթից 'ի սուրբ ուխտս (Սկեւռայ), և նկարա» գրութեամբ պատկերաց զարդարեալ. ընկալեալ զելեալ » յանապատէ փեսայս (զՆերսէս), գեղեցկացեալ տա» տուածային հանճարովն՝ որպէս լուսին, և պայծառա» ցեալ գիտութեամբ՝ որպէս զարեգակն, և հիացուցա» նող վարուք, կացուցին յաջմէ սորա զգլխոյ սուրբ տա» ճարիս, զարդարեալ և պաճուճեալ. և բազմեալ 'ի քա» հանայական աթոռն, 'ի տօնի Խնկուհւոյն՝ ետ զխաղա» ղութիւն ժողովոյս. և յարուցեալ կատարեաց զքանչելի » խորհուրդ սրբոյ պատարագին, յիշատակ փրկագործու» թեան Քրիստոսի և քաւութիւն ժողովրդեանս. որոյ » հաղորդեալ՝ տեսութեամբ և ճաշակմամբ, ուրախու» թեամբ մեծաւ մատուցաք փառս Աստուծոյ: Եւ յայնմ» հետէ բուռն հարեալ 'ի վշտակցութիւն ժողովոյս՝ բա» րեկարգութեամբ տնօրինէր 'ի հօրէն իւրմէ աւանդեալ » սուրբ ուխտիս »[1]: Ցայնմ մեծահանդէս աւուր՝ յորում զառաջինն քաղցրաբարբառ շրթամբքն զխաղաղութիւնն նուաճեաց, նովիմբ 'ի դէպ էր համարել արտասանեալ և զանուշակ «Ներբողեանն 'ի Վերափոխումն ամենօրհնեալ Աստուածածնին, (որպէս վերագրի ճառն՝ յաւելուածովս) » ասացեալ 'ի Ներսիսէ, ծնողաց խոստմամբ նմին ըն» ծայեալ ծառայէ». և սկսանի «Պարտական զատիմ » կուսական աւուրս տօնի՝ ընծայել զպտուղս բանի, իբր » զտնկեալ 'ի նմանէ որթ՝ 'ի մէջ բիւրաւոր ստեղանց՝ » յաստուածատունկ սուրբ այս տաճարի». այլ որպէս այլուր յիշեցաք՝ հաւանօրէն 'ի քահանայութեանն ասացեալ է նորա զայն ներբող: Իսկ տաճարն յիշեալ՝ նոյն թուի նուիրեալն առ Տիրամայրն. բայց զի շինեալ 'ի Հեթմոյ ասէ ժամանակակիցն, կամ որիշ էր յանուն նորին Խնկուհւոյ, կամ մերձ նմին մի յեկեղեցեաց ծանօթից 'ի յիշատակարանս, Ս. Փրկիչ, և Ս. Նշան անուամբք:

1 Այս բանք են Սամուէլի Սկեւռացւոյ՝ 'ի բազում անգամ յառաջաբերեալ յիշատակարանի անդ Մեկնութեանն Սաղմոսաց:

Սակայնն՝ որ և Աշնանափրիչ, յիշատակի առ երկոքումբք հարազատովքն, որք և եռուն գրել «'ի պատիւ » և 'ի փառս սուրբ եկեղեցւոյս Սմենափրկչի՝ զայս աստուածաբան մատեանս (Աւետարանաց) 'ի վանքս Սկևռայ », յամի 1193. զոր և յիշեցաք յաւարտ տեղագրին Լամբրոնի. և որոյ նկարիչն ասէ վասն երկոցուն եղբարցն. « Զարդարեալ պայծառացուցանեն զայս աստուածաշունչ միաբանութիւնս, հանգստարան նախնեաց » իւրեանց. յորոյ լրումն փառաւորութեան՝ հրաման եւ » տուն ինձ Կոստանդեայ՝ հոգեւոր երկամքք ծնեալ որ » զայ, ստատարութեամբ գրչի աւարտել, և երանգաք » ծաղկոց զարդարել...: Արդ աղաչեմ... զանիցս Ա-



» տուծոյ զարդարող՝ սիրով և հաւատովք, որակուրեանք
» նիւրոյս, զՏէրս իմ Ներսէս, և զիշխողս զՊատրն Հե-
» թում, անմոռաց պահեցէք 'ի կարգ յիշատակին որ
» 'ի սուրբ պատարագն »: Ոչ կարէ լռել քաջարուեստ
գրիչն և նկարիչ՝ զարժանաւոր իւր վաստակ. « Եւ զնուաս-
» տութեանս իմոյ սպասաւորութիւն աստուածային մա-
» տենիս՝ ատառուժապարգև արհնատիւս՝ յիշատակի սր-
» ժանի արարէք »: Աղթէ և վասն ուրումն Վարդանայ:
— Յետ հնգից ամաց (1198) ասա « յօթեվան հռչակաւոր
» ուխտի Սկևռայ, առաջի սրբոյ Սրանչելագործ նշանի և
» Փրկչին տաճարի », եղև գրչութիւն համաքաստակ և
թերևս գեղապատոյ ևս աւետարանի Պապեռնոնի, յայլ-
մէ գրչէ. յորմէ և յայտ լինի՝ զի ընդ դարութեանց և յա-
րուեստ գրչութեան և նկարազարդութեան խնամով մար-
զէին 'ի վանորայքդ: — Եւ զի ոչ միայն իշխանազանց
տերանց Լամբրոնի էին անդ հանգստարանք՝ այլ և վա-
նականացն, յայտնէ դարձեալ ծերունին Սամուէլ փա-
փագելով ձեռաք սիրեցելոյն իւրոյ զիսապետի Ներսիսի՝
ամփոփել ընդ նոսին. « Եւ զիմ աղքատութիւնս, ասէ,
» գնել սորին օրհնութեամբ՝ 'ի դամբարան հանգստեան,
» ընդ սրբոյ խնց հարցն. որ այժմ հուպ եմ սոցին՝ ծե-
» ռութեան ալեաք կոծեալ...: Յող ազթից ձերոց կա-
» թեսցէ 'ի հոգի մերոյն հանգստեան, և բեղմնաւորեալ
» մեռուցէ զթաղեալքս յարգանդ երկրի՝ գարնանոյ յա-
» ռութեանն, պայծառանալ նորոգմամբ ընդ առաջ Քրիս-
» տոսի »: Յիշէ սա յանուանէ և զսակաւս սմանս յիւրոց
ժամանակակցաց վանականաց. բայց՝ յայլոց ժամանա-
կագրաց՝ ծանօթանան մեզ և այլք սմանք արժանաւորք
յիշատակի. որոց և 'ի մնացորդաց գրաւոր վաստակոցն՝
հաւատի զէթ 'ի կիսոյ ԺԲ դարու ցելս ԺԳին, մեծա-
պէս պայծառանալ Սկևռայ՝ գիտնական և զգուշակեն-
ցաղ միաբանաք, և բարգաւաճել առատագեղ խնամաք
տերանց անառիկ բերդին: — Ի միջոցի ամացն յորս Սա-
մուէլ զԱղամասամկնիչն և զյիշատակս Ներսիսի գրէր,
և Կոստանդին նկարէր զաւետարան Սմենափրկչին, յե-
ռեան դան խաչատուրն այն ոսրատաց, պաշտօնեայ սի-
բեցելոյ վարդապետին, և Գէորգ վարդապետ հաւաքող
և յերիւրող Հարանց վարուց, ընդ տեսչութեամբ հաստ-
ատակաց վարդապետին Ներսիսի, յամի 1192. յորում,
ասէ, գասն վարք և խօսք սրբոյ Հարցն, « 'ի զանազան

» օրինակս, 'ի մի հաւաքեալ 'ի վանքս Սկևռայ, ընդ հո-
» վանեաւ տեառն Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի
» Քրիստոսի տաճարի և մոր Աստուածածնի, և կենաս-
» կիր Սուրբ Փայտիս, հրամանաւ հզնազգեաց եղբօր մե-
» րոյ Խաչատրոյ. քանզի այս աստուածային այրս սաղ-
» պեաց զիմ տկարութիւնս՝ զհամակրսն եղբօրս իւր
» Գէորգեայ, ընալ զփափագ տենչանաց իւրոյ՝ այսու
» մատենիս... և ինքնիւն Աստուծոյ կատարեցի՝ ընդ
» ձեռամբ հոգեւոր վերակացութեան Յեառն իմոյ Ներ-
» սեսի արքեպիսկոպոսի սրբոյ, որ այժմ կայ 'ի գլուխ
» սուրբ և հռչակաւոր այս ուխտի միաբանութեան ժա-
» ղովոյ, և հովանի զմայրաքաղաքն Տարսոն, հանդերձ
» գաւառաք Կիլիկիոյ. և քանզի այս աստուածային այր
» ընթերցող գրոց Աստուծոյ և մեկնող, այլ և փափա-
» գանաք 'ի միասին հաւաքող, որոյ՝ եղբայրս այս Խաչա-
« տուր՝ կամակատար սպասաւոր, և մանրուր անձինն սքա-
» բութեամբ պաշտօնեայ, աշակերտեալ բանից և նմա-
» նութեամբ ընթացից վարուց և բաղձանաց 'ի նոյն նկար-

» տիլ, որ և սա ըստ չափու իւրոյ՝ ստացաւ մատեանս
» գրոց՝ հաւատար Տեառն իւրոյ և վարժապետի. և զոյն
» 'ի նոսին յորդորանէ և խրատու՝ յօժարութեամբ ետ
» գրել », և այլն: — Հ. Զամչեան պատմագիր մեր՝ ասէ
սորին իսկ Գէորգայ նախ քան զհամանունն կրեալ՝ սրա-
բեալ Մեկնութիւն Եւսեբեայ մարգարէութեանն, 'ի յի-
շատակարանի ուրեք գտեալ հատուած բանի, այլ ինձ
այս չէ ծանօթ. թէ ոչ չիսոթիցէ զգործս երկոցուն համ-
անուանցն: Գէորգս այս երէց՝ թերևս նշանաւոր քան
զամենայն միաբանս վանացն էր 'ի ժամանակին, զի ոչ
միայն վարդապետ՝ այլ և վարժապետ կոչի 'ի Սամուէլէ.
և զնա ընդ Սրբոյ Լամբրոնեցւոյն՝ առաքեաց Լեոն ընդ
առաջ կայսերն Աղամանայ. և երկրին նոքա միայն զեր-
ծան յասպատակէ Խամպելացւոյ՝ որք կոտորեցին զընտ-
կերս նոցին. և ապա դարձեալ ուղղոյ եղեն 'ի միասին:
Ի միջոց ժամանակի կրկին ուղևորութեանցն Ս. Ներ-
սէս յանձնեալ էր Գէորգայ ընդօրինակել յիւր իսկական
ընագրէն՝ զԱղամասամկնիչն, « և նա յօժարութեամբ



» յանձն էառ. պատրաստեաց զնիւթն, և սկիզբն արար.
» իսկ ասա փութացուցեալ յիշխանական հրամանէն
» զհանապարհն որ առ ինքնակալն Հռոմայ՝ թագաւորն
» Ալամանայ, ճանապարհակից էառ զԳէորգ. և ինձ Սա-
» մուելի նուաստի (ասէ գրիչն) հրաման ետ զսկսեալսն 'ի
» նմանէ աւարտել. զոր յօժարութեամբ յանձն առի, և
» պինդ հաւատով 'ի փառս Աստուծոյ կատարեցի, 'ի թու.
» ՌԼԹ ». 1190 ¹: Այս Սամուէլ է ծերունին որ յաւարտ
գրչութեան Սաղմոսամեկնչին կարգեաց զպատմութիւն
վարուց Ս. Ներսիսի Լամբրոնացւոյ ց'38 ամ կենաց նո-
ցին: Զընդարձակագոյնս զայս յերկսիրութեանցն ըստ
Սաղմոսամեկնչի՝ ասա 'ի Սկևռայս արտագրեալ էր հե-
զինակն. և թերևս հուսկ ատանոր զվերադարձութիւնն
'ի Մեկնութիւն Աւետեաց գրոց, յամի 1197. զոր ասէ

¹ Ի շարագրել իմ զայսոսիկ՝ ընաւ և ոչ 'ի միտս անկանէր թէ ապրեալ իցէ ուրեք մատեանն այն ընդօրինակեալ յերկուց յաւաջադէմ միաբանից Սկևռայ. և ահա ըստ անակնկալ բազմի յետ իւր ուրեմն ամաց անկաւ պատուական սուրբն այն 'ի գերիկ իմ. մատեան երկիշեան սուտար և մեծ, որոյ միայն նեղբին շրջանակի գրուածոյն երկայնութիւն է 0,40 Զ. լուսանցքն կարեալք և կարծեալք են, և գունագոյն զարդքն 'ի գլուխս իւրաքանչիւր սաղմոսաց՝ մեծագոյն մասամբ 'ի բաց հանեալ 'ի տխմարաց. քանզի գեղեցիկ զարդք են ճարտարին Կոստանդնի՝ որոյ նկարեալ է զԼամբրոնեանց աւետարանն. զրէ նա և 'ի Սաղմոսամեկնչիս կարմրագեղով ուրեք ուրեք զանուն իւր ընդ բուն գրէն, որպէս է տեսանել 'ի նմանահան լուսատիպ՝ որ 'ի վերոյ:

ինքն « սկսեալ 'ի քննութիւն աստուածախօս իմաստիցս՝ » երեքամեայ յառաջ (1194)... և յայս ամ որ է ՈԽԶ (1197) » գնացեալ իմ 'ի Կ. Պօլիս և խնդրեալ իմ 'ի Նորին » պատրիարքէն զօր առ նոսին տեսութիւն Առաքելոց և » Ցրոյ, ընթերցեալ տեղեկացայ՝ զի զօր առ 'ի մէնջ » պտղաբերէ շնորհք Սուրբ Հոգւոյն՝ ոչ ինչ նուազ էր » յայնմանէ. և նախ քննեալն՝ համաձայն էր և ոչ օտարանայր. եկեալ 'ի յարկս իմ երկրպագութեամբ գոհացայ զԱստուծոյ, և քաջալերեցայ 'ի քննութիւնս, հողս » Ներսէս՝ որ 'ի Տարսոն անուամբ այցելու, և 'ի Սկեւռայն օթեվանքս՝ բնակեալ 'ի հանգիստ »: — Անդ 'ի միւսում ամին խաղաղ հանգեաւ բազմավաստակ և սրբասնեալ հոգն այն, որպէս յայտ առնէ ողբախառն բան քեռորդւոյն համանուան, 'ի մի զուգաւորելով զսուգ քեռւոյն և զվտարմանն 'ի սեփական բնակութենէն, 'ի դղեկէն Լամբրունի, « և 'ի միաբանակեցաց և հրեշտակաբնակ ուխտէ յՍկեւռայ վերաձայնելոյ. յորում տեղւոջ » ծնունդ և սնունդ Սրբոյս, և յորոց միջի այժմ դամբարան սորա »:

Ի գեղեցիկ յիշատակարանաց ընդօրինակութեան Պատարագամատոյցին և յընծայականէն առ քոյր իւր Մարիամ, երեւի 'ի համբակ քահանայդ Ներսէս՝ որդի Մարեմայ քեռ Սրբոյն [1], ոչ միայն անունն այլ և հոգի և ճարտար գրիչ սիրեցելոյ քեռւոյն. ցաւէ մեզ՝ զի ոչ այլ ինչ մնայ և կամ ճանաչի սորա գրաւոր վաստակ. այլ ուսումնասիրութեան Նորին և հոգեսիրութեանն՝ վկայ են և բանքն և յորդոր առ քոյր բանասէրս՝ 'ի դրուատ մեծի արենակցին. որոյ ձեռնասուն գոլով և 'ի վանս Նորին սնեալ, անդ և յետ վախճանի Նորին ձեռն արկեալ գրէր և տայր գրել զՊատարագամատոյցն, մասն մի « 'ի ձեռն » ուրումն եղբօր Աւետեաց՝ սրբասէր քահանայի, 'ի միաբանակեցաց վանս անուանելոյ Անապատ. իսկ այլն 'ի » Սկեւռայն վերասացեալ, ձեռամբ ուրումն 'ի կղերիկոսաց սուրբ եկեղեցւոյն Զօրավար անուանելոյ »: — Եւ ահա միւս ես եկեղեցի յայտնէ դա, թերեւս զՍ. Գէորգն, որ տեսցի 'ի յետագայդ: — Գեղեցիկ սիրով ըղձայ քեռորդին Ներսէսի՝ զի արժանաւոր վարդապետք ժամանակին « յիշատակեսցին առաջի Աստուծոյ, ամենայն » բարեկամք Նորա և երջանիկ վարդապետքս մեր և տա» ծիչք հոգւոյ մերոյ, Գրիգոր և Բասիլ [2], առ որովք » այժմ դեգերիմք 'ի վարժս. որով լցեալք առ մեզ լինին » թերութիւնք Սրբոյն՝ յորմէ զրկեցաք. որք յաղօտ և » նսեմացեալ ժամանակս մեր՝ որպէս զաստեղս լուսապայծառս փայլեն 'ի գիշերի...: Ընդ սոսին և սնուցիչ » մեր և տախտակաւ վարժիչ՝ զԲասիլ քահանայ, և զայլ » ևս ուսումնակից և զաշակերտակից անձինս, զՅովհաննէս և զԲարդուղիմէոս, նա և զամենայն զարմս մեր [3] »:

Իսկ վարդապետն այն Գրիգոր՝ է հռչակաւորն և յատուկ Սկեւռացի մականուանեալ, վասն բնակութեանն յայսմ մենաստանի, այլ ծննդեամբ 'ի նոյն ինքն 'ի Լամբրոն աւանէ, վասն որոյ կոչի և Լամբրոնեցի, կենակից գոլով Սրբոյն, և յետ Նորա առաջին համարեալ 'ի գիտունս և 'ի խոհականս. զորմէ ոչ միայն աշակերտեալս սմա Ներսէս վկայէ, զառ 'ի վերոյգրելոյն, գոլ այր իմաստուն « և վարժեալ 'ի մանկութենէ ամենայն հին և » նոր կտակարանօք,... որոյ ոչինչ էր վերջին գտանել ըստ » ամենայն իրի՝ 'ի սորա հանգունատիպ լինելոյն ». այսինքն հանգոյն կամ հաւասար լինել իւրումն մեծի քեռւոյ Ներսիսի. այլ և խորատես ակն Լեւոնի արքայի՝ յետ Ներսիսի զսա մեծարեաց. սմա ետ թարգմանել 'ի յոյն լեզուէ զթուղթ « Վահանայ կամ Յովհաննու արքեպիսկոպոսի քաղաքին Նիկիոյ, զոր գրեաց առ երանելին » Զաքարիայ կաթողիկոս Հայոց », որպէս ասէ Անաւարզեցին 'ի Ցայսմաւուրս իւր, « Սուրբ և մեծ վարդապետն » Հայոց Գրիգոր Սկեւռացի », կոչելով: Սմա՝ նոյն մեծ թագաւոր՝ զներքսագոյն և զյետին գաղտնիսն հաւատայր, զոր յետ Աստուծոյ ոչ այլ ումեք կարէր. այսինքն է, մինչ հանդերձեալն էր յանդիման լինել տիեզերաց դատաւորին, « կոչէր զսուրբ վարդապետն Գրիգոր, և » խոստովանէր զյանցանս իւր, և... ընկալեալ զհաղոր» դութիւն 'ի ձեռաց սուրբ վարդապետին, գոհանալով » զՏեառնէ »: Եւ յորժամ յետ սակաւուց 'ի միւսում ամին (1220) 'ի վախճանել Յովհաննու կաթողիկոսի, և 'ի ժողովելն յընտրութիւն յաջորդի, երկպառակութիւն

[1] Ոչ յիշի հայր սորա, այլ դուշակի ազնուատոհմ լինել:

[2] Բասիլս այս թողեալ է զնիւք ձեռինն կամ զգրչին՝ յաւարտ մատենի Պարապմանց Կիւրղի, զոր յիշեցաք ընդ ձեռացգիրս Սրբոյ Լամբրոնեցւոյն, դոյզն յիշատակաւ. « Ի ՈԻԴ (1175) թուականիս « շարադրեցաւ բանս աստուածային՝ 'ի ձեռն Ներսէսի. զԲասիլս յիշեցէք 'ի Տէր, զկնի աշխատողի սորին »:

[3] Թէպէտ ոչ երկասիրութիւն երկար, այլ և սակաւ մնացեալք 'ի կրսերոյս Ներսիսէ յիշատակարանք՝ վկայեն ոչ միայն հոգեսիրութեանն, այլ և խորագոյն իմացմանց և ազնիւ սիրոյ. զոր, որպէս վասն մեծի քեռւոյն իւրոյ համարեցաք մասամբ իմն ծծել կամ ձգել յինքն՝ 'ի գրկաց Շնորհալւոյն, նմանապէս համարիմ և 'ի Լամբրոնացւոյն՝ յինքն փոխադրել քեռորդւոյս. վայելչապէս իմն յօրինելով զհրաշափառ երրեակն Ներսիսեանց՝ յայսմ պարագայի: Վկայ բանիցս եղիցի գիրն ընծայական՝ զոր գրէ առ հաւատաւոր քոյր իւր Մարիամ, ներկուռ և արուեստակեալ շարադրութեամբ, առաքելով ընդ նմին զիւր ձեռագիր օրինակ մի Պատարագամատոյցի քեռւոյ իւրեանց. « Աստուածային իղձս փափագանաց պատուականագունդ ինձ՝ զիտելով միշտ 'ի տէրունականան, վասն որոյ ուրախացուցիչ առիթ մատուցանեմ քեզ Նուէր, Սէրելի հարազատ իմ Մարիամ, » զոր առ մեզ անցուցեալ յաստուածային Հոգւոյն փչմանէ՝ միշտ » ընդ տեւողին բարգաւաճելոյ առնն, 'ի ասխպմանէ խնդրոյ, յորմէ » որ վերագոյնդ յայտնէ բան՝ համանմանոյն երգ. զոր երկօք աշ» խատութեան արձանագրեալ քոյս Ներսեսի, ըստ այսմ յաղագս » որոյ բանս է, քեզ 'ի սփոփանս ընձեռեցի. զիտելով պատուականագոյն քեզ քան զորովք քամահեցեր, զոսկի և զականս պատուականս և զօրս նոյնպիսի: Նաև յաղագս և յայս ես զքեզ յորդորելոյ. զի որպէս 'ի սկզբանց անտի խոկման քո 'ի կոչումնդ որ եսդ, » և զանծուկ ընթացից ուղւոյն բուռն հարկանելով բարեբանելոյդ » էր նախանձարկութեամբ, նոյնպէս յայսմ օրէ հետէ փութալի » քեզ եղիցի՝ ընդ սկզբանն և կատարածին փոյթ ըստ? հանդիպել, » թէպէտ և բնաւիցն եմք օտար: Զի մի յանձինս մեր աւարտիցի » բանն ասացեալ 'ի Տեառնէ, Այս այր սկսաւ շինել, և ոչ կարաց » կատարել. այլ եղիցի արժանի լինել հաստատել զանձինս՝ որպէս » զսա՝ 'ի վերայ ամրագոյն վիմի, անվրդով յամենայն յարուցմանց » մնալով, 'ի փառս Աստուծոյ. ամէն: »

Գուցէ քաջիկ ես յայտնեսցէ զնոյն ոգի և զոճ գրողին՝ և հակիրճ յիշատակարանս այս՝ յաւարտ ընդօրինակութեան Պատճառի Թղթակցութեան Հայոց և Յունաց, հաւաքելոյն 'ի սրբոյ քեռւոյ իւրմէ. « Զստացողիս կեանք, զստացողն իւր յոգի, զստացողս » Ներսէս՝ յայժ վերջացեալ յաշակերտութիւն և որդիութիւն հա» մանուն սուրբ Հօրս, որոյ փափագմամբ տառիցս տարփանօք հա» րեալ յոգի՝ սիրով, յաւելի զսա 'ի մթերս աստուածային շտեմա» րանաց, ըստ? կրկնակի ես մաղթելով ամբարել: Արդ եղիցի յի» շատակ երիցն 'ի մի բան յօդաւորել մեզ, զոյն տեւողին և ստա» ցողին ընդ աշխատելումն »: — Թերեւս ընդօրինակողացն անստոյգ ընթերցուած խրթնացուցեալ է զշարադրութիւն բանից Ներսիսի:

լինէր յիշխանն, ոմանք զսա՝ զԳրիգոր՝ կամէին կացուցանել, պարագլուխ իւրեանց ունելով զԿոստանդին տէրն Լամբրոնի, զեղբօրորդի Սրբոյն Ներսիսի. յորոյ խնդրոյ արարեալ իսկ է Գրիգորի զգեղեցիկ ճառն 'ի խորհուրդ մեծի Ուրբաթու, 'ի բանն Եսայեայ, Տէր ո՞ հաւատաց լրոյ մերում, և յորոյ կատարածին ասէ զնմանէ. « Որ և » զմերս աստուածասէր իշխողի, և տէրունական տոնից՝ » ըստ կամաց յօժարութեան և նիւթական արդեամբք » վայելչապէս պայծառացուցանողի, որ..... խնդրեաց » զայս չնչին և աղքատիմաց բան՝ յանխմաստ բանաւորէ » և կրկին հայեցողութեամբ ճայրատելոյ, իմանալեաւ և » զգալեաւ, ընկալցի », և այլն. յետին բանիւն յայտ առնէ զաչացն վատթարել, թերեւս առ ծերութեան, որով և յետ վերոյգրեալ թուականիդ արարեալ երեւի ըզբանքս. յայտ է 'ի պատմութենէ՝ զի փոխանակ Նորա նախամեծար եղև Կոստանդին Ա. Բարձրբերդցի՝ 'ի կաթողիկոսութիւն: — Որպէս վերագոյն բանդ եցոյց, որբացեալն Ներսէս զԳրիգորս զայս եգիտ իւր երկրորդ հայր և վարդապետ, և բազում թախանձանօք սմա ետ « արձանագրել ներբողիւք զվարսն. որոյ 'ի սկզբան » սակաւ ինչ և գովելի հակառակութեամբ բերեալ, ըստ » սրբոյն օրինի, գերազանցութիւն քան զչափ զօրութեանն զայս վարկանելով, և ապա... յանձն առնու. » քանզի և սէր ըստ սրբութեանն համացեղի լինելոյ՝ ոչ » տայր թոյլ ընդ գրուանօք ծածկիլ և զառ յինքեան » գտեալն. քանզի զնորայն պատմելով և զիւրն ես իբրև » զօտարի ասէր: Որոյ և մեր յայսմ ժամանակի տուեալ » զանձն յաշակերտութիւն, որպէս կրկին ժառանգել » զոր կորուսին. զի թէպէտ 'ի նմանոյն վրիպեալ՝ այլ 'ի սըմանէ թերեւս ըստ յաջողելոյ Տեառն մի լիցի ունայնաձեռն եւանել... Եւ եղև... գրութիւն ճառիս 'ի ՈԾԴ, » ամի » (1205): Խոհական գրուած է ճառդ, յատակ ոճով շարագրութեան, և ոչ սակաւ գեղեցիկ իմաստիւք, այլ անհաս առ Ներսիսեանն: Ըստ այսմ իմս և զայլ գըրուածս Նորին. որպիսիք՝ վերոգրեալ ճառն Աւագ ուրբաթու, և ճառն 'ի Յարութիւն Տեառն, յաւէտ 'ի կանոնսն Խուզարկու, հանճարեղ տեսութեամբք միաբանելով զբանս չորից աւետարանչաց՝ յորս այլաբանք երեւին. որոշելով 'ի միմեանց զհնգեսին Մարեմանս, և մերժելով զկարծիս՝ համարողացն զԱստուածածինն Մարիամ եկեալ ընդ նոսին 'ի գերեզմանն Տեառն [1]. յորս ընդ յստակութեան լեզուի՝ խոհական ընտրութիւն մնայ երեւի՝ քան ճարտասանական ձևք: — Ծանօթ է բազմաց նովին յատակ լեզուաւ և մօք՝ միատարր երկայն Աղօթք Նորին, պէսպէս նկատմամբ տնտեսութեանց Աստուծոյ առ մարդս, և մարդոյս կրից և յանցուածոց, « 'ի դիմաց համօրէն » մարդկային սեռի », որպէս ինքն իսկ ասէ ուրեք 'ի կարգի բանիցն [2]: — Աղօթասիրութեան Նորա պտուղ է և խոկումն վարուց գերագոյն աղօթկերի մերոյ՝ Ս. Գրիգորի Նարեկացւոյ, զորոյ զվարս գրեաց Սկեւռացիս: Ուրոյն է Նորա Աղօթք որ 'ի ժամու խորհրդոյ Պատարագին. միւս ևս Աղօթք առ Ս. Աստուածածինն, որոյ սկիզբն է « Ամենօրհնեալ Աստուածածին, տաճար Բարձրելոյն », շարադրեալ 'ի խնդրոյ Պետրոսի քահանայի, ըստ տնօրէնութեանց Քրիստոսի յարմարեալ զաղաչանսն առ Տիրամայրն. և 'ի հասանելն 'ի յիշատակ չարչարանացն և Խաչին, յանպատրաստից իմն փոխէ զոճն 'ի չափական և նոյնայանգ բանս.

« Եւ որ կայիր մերձ առ խաչին
Զարչարանաց իմ Յիսուսին,
Եւ լըսէիր ըզծարաւին
Բարբառելոյ քո Միածնին,
Որում զքացախն ետուն յարբումն
Եւ ըզլեղին 'ի ճաշակումն.
Որ հեղուսեօք բևեռեցաւ,
Եւ տիգաւ կողըն խոցեցաւ », և այլն:

— Ծանօթագոյն ևս է ամենայն պաշտօնասիրաց յեկեղեցիս Հայաստանեայց՝ գեղեցիկ ցոյց ստեղծաբան հանճարոյն՝ այբբենակարգ Շարականն որ 'ի Ծնունդ Յովհաննու Մկրտչի, նուագեալ յամի 1198. « Արեգականն ար» դարութեան ծագման՝ արուսեակդ առաւօտեալ ». յորովութիւն թուոյ տառից մերոյ ստորէ նմա նկատել և գրուատել զՄեծն զայն 'ի ծնունդս կանանց՝ բազմապատիկ օրինակօք, 'ի սկզբնական արուսեկատիպ կարապետութենէ ծննդեան Քրիստոսի, մինչև 'ի հուսկն. » Կարապետ կրկին իջման Տեառն՝ 'ի ստորին կողմն եր» կրի » գոլ, և « Ցնծութեան աւետաբեր հոգւոյն որք 'ի » դժոխս ». 'ի հարկէ ոչ մոռանալով զյատուկ հանդիսարան կամ զկայութիւն կենացն և զաւիթ կատարածին.

« Բամեալ խնջյս արբեցութեան՝ յաւուր ծննդեան մահաբերին,
Զքեզ՝ որ խայտալով ծընար՝ տատանկդ անապատի,
Կաքաւելով խնդրեաց 'ի մահ՝ դուստր Հերովդիադայ » [3]:

— Այսչափ ինչ է յիմս հասեալ զխտութիւն՝ 'ի գրուածոց և գործոց իրաւապէս հռչակելոյն 'ի վարդապետս ժամանակին, Գրիգորի Սկեւռացւոյ կամ Լամբրոնեցւոյ. որոյ թելադրութեամբ կամ հրահանգութեամբ՝ համարի Տաթեւացին Գրիգոր՝ յօրինեալ Արիստակիսի վարդապետի զԱրուեստ գրչութեանն, զոր յետոյ ընդարձակեաց և կատարելագործեաց՝ երկրորդ յետ Գրիգորի ընծայեալ գիտնագոյն 'ի վանաց սոսի, և զոյգ նմին ծննդեամբ Լամբրոնեցի, և կոչեցեալն Սկեւռացի, այն է Գէորգ վարդապետ, յոր ընդ հուպ դարձցի բանս: — Գրիգորի՝ վիճակա-

[1] Յայս կարծիս ըմբռնեալ է և մեծ Լամբրոնացին 'ի գրեն զնախընծայ ներբողեանն 'ի Վերափոխումն կուսին:

[2] Բազում ուրեք յաղօթքս՝ զարձակ բանն փոխէ 'ի չափական և մանաւանդ 'ի զուգաձայն յանգական, ըստ ոճոյ Ս. Լամբրոնեցւոյն. որով և ուրեք բանադատեալ երեւի բանակարգութիւնն, և 'ի հասարակի արուեստակեալ է շարադրութիւնն որպէս և իմաստքն:

[3] Յառաջեալ էր քան զԳրիգոր՝ գրուատեալն իւր Վարդապետ՝ Ս. Ներսէս, գրել 'ի Մեկնութեանն Ամովսայ. « Զանանկն Յովհաննէս՝ պարարակն անապատի, ետ գլուխ Հերովդէս՝ կօչկացն Հերովդիադայ, 'ի կաքաւելն իւրում »:

փոքՀելոյ 'ի կաթողիկոսութիւն՝ գէթ արժան էր ժամանել յեպիսկոպոսութիւն, թէ և ոչ յիշի այս ստուգիւ, և ոչ 'ի վերնագիրս գրուածոյ Նարեկն մակագրի նմա այդպիսի կոչումն. սակայն զի Գէորգ կոչէ զոք 'ի նմին ժամանակի Տէր Գրիգոր դիտապետ ուխտին Սկեւռայ, չէ անդէպ նոյն զսա համարել, և յաջորդ Վարդանայ արքեպիսկոպոսի Լամբրոնի [1]:

Յամին յորում չարադրեաց Գրիգոր զներբողեանն 'ի Ս. Ներսէս, այն է 1205, վերոյիշեալ քահանայն Գիւտրոս, որ կոչէ զինքն «տրուպ յորդիս եկեղեցւոյ», ընդօրինակէր զգիրս մեկնութեան Թղթոց, «մերձ 'ի դղեակս Լամբրունի՝ 'ի դերահաչակ անապատս Սկեւռա, 'ի մէջ քրիստասազգեաց սուրբ հաղնուոր եղբարց միաբանս կեցայ, որոց ձեռնտուութեամբ յանգ եղեալ աւարտեցաւ կոչեցայ, որոց անուն Ջուփրի, այր խաղաղարար, և Մայսար (կարգապետ Աստեւոյ) Դամիկուն, և Քուամնտուր (Commandeur) տանն Հիւանդանոցին, և ամենայն իշխանք Ծովերեւոյց, բայց 'ի Բրենդէն, և բոլանդակ աւագութիւն (avocat)». ապա սկսան վիճաբանել վասն գլխաւորութեան Առաքելոյն Պետրոսի. յորում՝ թէպէտ և ոչ սակաւ հմտութեամբ Սուրբ գրոց խօսէր Մխիթար, այլ և կանխակալ կարծեաց և ոգւով ոչ կամէր տալ տեղի և ուր արժանն էր: Յետ այսր խնդրոյ՝ գուն գործեաց մեծացուցանել զկաթողիկոսն քան զպարիսպրքունս, իբրու այն զի կաթողիկոսն անուն ընդհանրական է քան զոչ պարիսպրքին, և զի սա՝ քաղաքի կամ գաւառի միոյ զլուխ կայ, «իսկ կաթողիկոսն Հայոց՝ պետ ազգի միոյ » ողջոյն »: — Եւ զայսսիկ երկուսեաւք տրամախօսութիւնս՝ հանդերձ յաւելուածով պատմութեանն հարեալ 'ի գրի՝ մատոյց 'ի գործին առ թագաւորն Հեթում, քառասող չափական բանիւս ընծայութեան.

« Ընկալ զընծայդ իմ ըղձակաւ, զոր ձեզ նուիրեմ, արքայ Հեթում.
Վեհ էր խնդիրքն քո քան զիս, և իմասանայ՝ գործն այլում.
Զի գեղեցիկ զրէր քան զիս, բան արժանեաց տեայ մատաց քում.
Լեր անարգամեծար առ իս, և նմանեա ատ Տեառըն քում»:

— Այս բանք ընդօրինակեցան 'ի մատենէ գրելոյ յամի 1274, յորում՝ հաւանելի է թէ կենդանի էր հեղինակն Մխիթար. որ յետ այնր յաւելեալ է գլուխ մի բանի, 'ի խնդրոյ Յակոբայ եպիսկոպոսի Կաստաղենի, ընդդէմ Յունաց վասն պարիսպրքական աթոռոյ, և յաւէտ ընդդէմ Կ. Պոլսի աթոռոյն: Զատ յայսցանէ վեհաս մեզ գրուած 'ի Մխիթարայ Սկեւռացւոյ: — Բայց արժան է ուրոշել 'ի սմանէ զգրուածս Վարդանայ Տարաւցւոյ, որոց ճառեալ է 'ի նմին ժամանակի զնոյն նիւթոյ բանս, և ոչ հանդարտութեամբ և զգօնութեամբ. այն զի ընդօրինակողք՝ բաղում անգամ զՄխիթար կոչեն Տարաւցի, և զՎարդան՝ Սկեւռացի. զարձեալ և ոչ ընդ այլոց Մխիթարայ շփոթել, այն է Սամեցին, որ և կրսերագոյն է ժամանակաւ:

Ի մէջ ժամանակի բոլանդակ ԺԳ դարուն՝ ոչ գտանեմ սոյն յիշատակ Սկեւռայ, բայց զՄաղուն 'ի նմին արքեպիսկոպոս Տիւրոսի, յԱքքեա քաղաք. որ եկեալ սորա յամի 1263, զչարէր ընդ ոչ գալ առ ինքն կաթողիկոսին Հայոց կամ նուիրակի նորին. վասն որոյ զժկամակութեամբ ընկալաւ զառաջինն զՄխիթար. և ուր ուրեմն զկնաւ ընդունել զընծայս կաթողիկոսին. ապա ասացեալ ասէր. « Լուեալ եմ վասն քո՝ զի այր բանիբուն » ես դու յոյգն քո, զի օկտիմք թերևս 'ի քէն ». և կրկնէր, « այր իմաստուն ես, որպէս ասացի, և զոր ինչ խրն » գրեմ՝ առնես պատասխանի »: Եւ նորա ըստ պատշաճի խոնարհութեամբ տուեալ զպատասխանին, միանգամայն և զգուշութեամբ, զի՝ որպէս ասէն, « Էր ժողով » առ նա (լիկատն) մեծ՝ յաւուր յայնմիկ. քաղաքապետն՝ » որոյ անուն Ջուփրի, այր խաղաղարար, և Մայսար » (կարգապետ Աստեւոյ) Դամիկուն, և Քուամնտուր » (Commandeur) տանն Հիւանդանոցին, և ամենայն իշխանք Ծովերեւոյց, բայց 'ի Բրենդէն, և բոլանդակ » աւագութիւն (avocat)». ապա սկսան վիճաբանել վասն գլխաւորութեան Առաքելոյն Պետրոսի. յորում՝ թէպէտ և ոչ սակաւ հմտութեամբ Սուրբ գրոց խօսէր Մխիթար, այլ և կանխակալ կարծեաց և ոգւով ոչ կամէր տալ տեղի և ուր արժանն էր: Յետ այսր խնդրոյ՝ գուն գործեաց մեծացուցանել զկաթողիկոսն քան զպարիսպրքունս, իբրու այն զի կաթողիկոսն անուն ընդհանրական է քան զոչ պարիսպրքին, և զի սա՝ քաղաքի կամ գաւառի միոյ զլուխ կայ, « իսկ կաթողիկոսն Հայոց՝ պետ ազգի միոյ » ողջոյն »: — Եւ զայսսիկ երկուսեաւք տրամախօսութիւնս՝ հանդերձ յաւելուածով պատմութեանն հարեալ 'ի գրի՝ մատոյց 'ի գործին առ թագաւորն Հեթում, քառասող չափական բանիւս ընծայութեան.

« Ընկալ զընծայդ իմ ըղձակաւ, զոր ձեզ նուիրեմ, արքայ Հեթում.
Վեհ էր խնդիրքն քո քան զիս, և իմասանայ՝ գործն այլում.
Զի գեղեցիկ զրէր քան զիս, բան արժանեաց տեայ մատաց քում.
Լեր անարգամեծար առ իս, և նմանեա ատ Տեառըն քում»:

Մարեմայ՝ քեռ արքային Հեթմոյ, Կեռա-Մարի կամ Կալա-Մարի, Գունդէս Ճաֆուն կոչեցեալոյ, այսինքն Կոմուհւոյ Յոպպէի. կին զոլով Յովհաննու Իպլինեան սեռաւն Յոպպէի. և մխիթարութեան աղագաւ, թերևս վասն մահուան հօր իւրոյ և արքայահօր Կոստանդինի՝ եկեալ (յամի 1263) [2] 'ի Լամբրոն, ասէին վախճանեցաւ, « թողուլով երկուս ուստերս և երիս դստերս », հայկական անուամբք կոչեցեալս, Օշին և Հեթում, որք և յաքունիս իսկ Հայոց թուին կեցեալ. զի և որպէս երկրորդին Ալեքսանդր անուն՝ եղև Սենեսկալ Հայոց: Ի բազմաթիւ հանգուցեալսն 'ի Սկեւռայ՝ որոշակի միայն զՄարեմայս և զՍ. Ներսիսի գտանեմ յիշատակեալ զիաղումն:

50. Թուի մերձ 'ի կէս ԺԳ դարուս ընծայեալ 'ի Լամբրոն վերոյիշեալ երկրորդ գիտնական վարդապետն Գէորգ Սկեւռացի. որ յամի 1267 ընդօրինակելով զՅանապատճառս գիրս՝ յայլ և այլ վանորայս Մեծայ Հայոց, ասէ

1 Թուի 'ի Սկեւռայ լինել ընդ երիցագոյնս ժամանակաւ և այնմ՝ որ 'ի կռան Պարապետի գրոց ձեռնադրի Ս. Լամբրունեցւոյն՝ գրեալ է. « Հրամանաւ Տեառն Ներսիսի, և տիրելիական վարդապետի, կաւ- » մեցաւ գիրքս այս, ձեռամբ ումեմն տառապեալ Գրիգորիոսի Ա- » բեղեցոյ. արդ Տէր Յիսուս վայելելոյ տացէ երկար ժամանակաւք

1 Ոչ միայն յարձակ բանի՝ այլ և 'ի չափականին ճարտարութեան՝ անդամսին յայնմ ժամանակի, ցոյց ընծայէ և այս յիշատակարան գրեալ 'ի նմին մատենի. որոյ սկզբնատառք տանց կապեն ԳԵՈՐԳ ՊԱՏԱՆԻՆ Ե ԳՐԵԱՑ. իսկ վերջնատառք՝ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ.

Քրիստեան տառիս ներքուստ գիտասքս տաւնից՝
Եղև նրպատաս ամն 'ի գրչաց 'ի բնաւս անարգ.
Գեղեալ յերկրի հեռատատնէ 'ի գիւտ բանի,
Եւ պատահեալ քաջն ուսուցչի, որում՝ բաղձայր.
Ուր իակեկակ ապա հարկի յամն եղբարբ,
Այն ինչ յաւարտ գրեթէ հասեալ վարժից բանի,
Դաբունական անուանն 'ի ճահ գալ արժանի,
Սակըս սիրով խոկման յօրէնքս Տեառն ցանգ.
Քոռվական խանդիւ տառիս այսմիկ բաղձայր,
Լինել նոբպատս և ձեռնտու իւրն փութի:
Հատանելին ապա ժաղթել ոչ հրաժարէ.
Թէպէտ և չէր նա բաւական առ այն խնդիր.
Յայլ հայելով առ յոյժ նորա փափագ սիրոյ՝
Եւ հրամանին փորձի ըլցող գալ ըստ կարի.
Տաքնապ հաստալ ապա եւ այլ խմն հարկի՝
Յայսքը փութոյ վերկեր պաշտել զնա պարապով.
Այլ և խրծիթն ոչ պատշաճեալ ըստ պատշաճի,
Եւ ևս գործէքն որ արհեստս այս ձեռն ոլ.
Ծեղաստեալ յոլով անգամ կրնիւր յապուշ.
Տինա յաւէտ 'ի զինչ առնել տարակուսէր:

զրեալ, « 'ի ձեռն տարաշխարհիկ պատանւոյ ումեմն թարգմանաւ գրչի՝ Գէորգեայ, 'ի Կիլիկեան յանմատչելի » ամրոցէն Ղամբրան կոչեցելոյ, որ է 'ի ստորոտ մեծի » լերինն Տաւրոսի: Որ ոչ եթէ իբրու ձարտար գոլով յարմեան գրչագրեան՝ յանձնապատասն համարձակութեամբ » ձեռնամուխ եղև . . . այլ 'ի յոլով խնամս վայելեալ » (Գրիգորի արքեպիսկոպոսի Բ)ենոյ և ձեռատան արգասաց » նորա տէր Վարդանայ և տէր Գրիգորի) . . . հարկեցաւ » ցիչ հրամանաւ սոցին . . . ստարաութեամբ նժդեհակցի » պանդխտութեան իւրոյ և դատարակի անկատարաւ » թեան՝ Յովհաննու քահանայի . . . Սակայն և ոչ կամաւ » կատար եղև մեզ դիպել տեղոյ և ժամանակի, այլ » փոփոխելով տեղոյնէ 'ի տեղի, գրեթէ և մեք ևս 'ի բարբարոց 'ի բարս և խորհրդոց 'ի խորհուրդս լինէաք յեղաշրջեալ . . . Նախ 'ի տիեզերահռչակ ուխտն Վիրապին . . » սակս կրթութեան 'ի մեծ վարդապետէն և յաստուածաբանէ » զգեաց առնէն Վարդանայ . . . և անտի փոխեալ առ » մեծ իշխանն Քուրդ, և մեր զկնի նորա հետևեալ՝ ժամանակ ինչ արարք յանուանեալն Սաղմոսավանք, » ուր և զառաջինն ուսարեցաք հատոր սրբոյ մատենից. » և քանզի 'ի զեպ լինէր և անտի ևս փոխել նմա 'ի գործ » բարւոք ուսուցչութեան՝ 'ի տեղի ուր Տէր յաջողեսցէ, » յաղարկեալք եղեալ մեր 'ի ստացողէ տառիս 'ի բան » տունս իւրեանց, 'ի մեծահռչակ հրեշտակարան առ » տուածարնակ սուրբ ուխտս Թեղենեաց, ուր և յանկ » իսկ հանաք զառաջարկեալս. բարւոք ընկալեալ զմեզ » բարեբարոյ և սրտաբէր քահանայի Սարգսի, սիրով և » յօժարամիտ կամաք սպասաւորելով », և այլն: Վարդապետն և ուսուցիչն Վարդան՝ է մեծահռչակ Արեւելցին, Պատմիչն և մեկնիչ, որոյ արժանաւոր գոսանի աչակերտ գրիչս այս. որ և անբաւական իսկ ասելով զինքն յարձակաւոր գրչագրեան՝ ասայ նշանակս ճարտարութեան [1] յայնմ կարևոր մակացութեան, յոր՝ հարկ է թէ քաջավայել եւրեւելով յայլ գրութիւնս իւր, յետ գործէն 'ի Սկեւռայ՝ աղաչեցաւ նախ 'ի Կոստանդեայ ումեմնէ (թերևս որ յետ ասայ կաթողիկոսն եղև, և յոր գարձցի բանս 'ի մատայ), և ապա 'ի նախամանօթ Սահմանոսէ Գոյներ Երիցանց, և գրեաց զնոյն արուեստս, ընդարձակելով և լրացուցանելով զգրուածն Արիստակեայ վարդապետի. և 'ի սկզբանն ասէ. « Անարատ անձամբ ձեռնարկեցի 'ի գրել » զսա՝ այրս թշուառս, և ծաղկաբաղ արարեալ զմասն » ինչ գրելոյն յԱրիստակիսէ հռետոր գրչէ՝ եղի ասատ. » է ինչ զոր լուծեալ 'ի նմանէ, և է յեղելոյս ասատ տա- » կուին տարակուսիս փակեալ. իսկ 'ի ծանօթ և յերկա- » բեալ նորայն բանից՝ էր ինչ յորոց երկայնութենէն » զանց արարի, և էր զոր վասն հաւատոյ զոլոյն՝ թողի. » և զերկրորդն լուեմ . . . Այլ վասն զրգարձիցն՝ զոր » սուկ յիշեաց միայն նա և էանց, ասց սակաւիկ մի ըստ » հանգամանսն և զպատճառս ևս ըստ կարի »: Այսչ և խնդրող գործոյս, թէ զնորատս գրչութեան « արարեալ » էր զսա յաստուածգոյն Գէորգեայ վարդապետն 'ի խնդրոյ » գրոյ ուրումն (Կոստանդեայ), զորոյ զպատան 'ի նմանէ՝ » յետայ իմ 'ի վարդապետէն խնդրեալ, և նա կատարեաց » զինդրուածս իմ, եղեալ յառաջ զԱրիստակիսի արա- » բերն, և զիերէն 'ի նմանէ կատարեաց ինքն, ինձ նը- » ւատիս Սահմանոսի Գոյներ երիցանց. որոց ոգորմեսցի Տէր, արարողին և խնդրողին »: Ոչ է նշանակեալ ամ յօրինման գրուածոյս. Գրիգոր Տաթեացի յամի իբր 1408 մեկնարանեաց զոյս զործ՝ իբրև զժուարիմաց, արպէս և զԱրիստակիսին՝ որ էր « ծանօթ եղեալ անհաս և » հարաւոր գրչի Գրիգորի Լամբրոնացւոյ ». և վասն որոյ բանս է՝ ասէ. « Գէորգ վարդապետն 'ի Սիս մայրաքաղաքի », գրեալ զայս արհեստս. — Ծանօթագոյն և նախադասական գործ Սկեւռացւոյս Գէորգայ՝ է Մեկնութիւն Եւսեբեայ մարգարէի. զորմէ, քանզի ոչ գոսանի բան նորա և ասոյգ թուական յօրինման, ոչ 'ի յառաջաբանի և ոչ 'ի վերջաբանի գրոցն, կարդեսցուք զընդօրինակողացն առ կենդանեաւ հեղինակին. յորոց մի ամն՝ Եզեմիա քահանայ՝ գրէ յամի 1295, եթէ Հեթմոյ Բ արքայի (1289–1307) « տեսեալ զմեկնութիւն համարձակախօս ասացեալ զիեկնութիւն

Դ վեհագոյն վեհին խնամոյ կարողացեալ
Առ այս նրբագ գլուսորել զառեալս յաւանդ.
Ծերջոզական ձայնիւ գրուան փառատրութեան
Իբրու արիսուր վայելչապէս ձառնէ նրմԱ:
Զթէ ելցէ հաճոյ կամ՝ ոչ տեսողաց՝
Նա 'ի յերբոյն փութոյ չէղև գրաեալ վրէՊ.
Ֆերազանցեալ էր խնդրողն տենչ բաղձանաց,
Յորմէ տաւղոյն յաղթեցաւ իբր 'ի վհէՀ.
Դոսէական խմն մասամբ գկամս ընձեռեալ
Իբրու զրումայն երկու զոր արկ այրն ազքաՑ.
Գղեալ տացող տառիս առ գրողն մեծախոհ,
Եւ զոբխանարն ներելով զերկս ընկալցի.
Հրժանաւոր վնեալ և ինքն 'ի Քրիստոսէ
Գտանել ներեալ և ողորմեալ յօրէն վերջին.
Ցընծալ պարել ընդ բազմելոցն յառագաստն,
Երրորդութեանն երգել ըզկառս միշտ ընդ նոսին:

Մինչ յայսպիսիս զեղերեր Գէորգ գրուածս և քերդուածս՝ յօտարութեան անդ, լուաւ զաղէտս ընկի աշխարհին, զասպատակ Եգիպտացւոց, զոզորմ պատերազմն Մառաւայ, հանգերձ այլովքն, և յաւել 'ի յիշատակարանն. « Այլ նա, բռնադատեալ զնս ատանօր » թախիծ սրտիս՝ յողբալիս յամէ պատմութիւն. զի յանցելում » ամի (1266) ներգրութեան այսր մատենիս, ասլանն Մարայ բազ- » մաձեռն զորու պատրաստութեամբ . . . սպայիւ, իբր 'ի ցասմանէ » Աստուծոյ ահեալ, եմուտ յերկիրն Կիլիկիոյ », և այլն. և յայլ ևս հնգետասան տողս համառօտել զդէպս իրացն:

» տուածատուս մարգարէին Եսայեայ, և զի մեծն Եփրեմ
» կարճ և համառօտ քաղաքական բանիւք էր անցեալ ընդ
» նա, իսկ աստուածաշնորհ Յովհան Ոսկիբերան... ճո-
» խաբար խօսեցեալ. արդ բարգաւաճս այս վասն Հե-
» թումի՝ 'ի մոր եղեալ զոսա 'ի մի ժողովել... խընդ-
» բեաց զայս առնել հարկեցուցիչ հրամանաւ՝ 'ի յերդեր-
» ջանիկ և 'ի ղուսարան Բարձրանալոնն Գէորգեայ, որ
» ընդ այսու ժամանակաւ առաքինութեամբ յանձին ներ-
» գործութեամբ փարթամացեալ, որ այժմս քրիստոնյան
» երկրամիք հրանանգի զնամբակ՝ որ բանի են հետեւեալ՝
» զայսոքս։ Իսկ սա իբրև քարող ճշմարիտ հնազանդեալ
» հարկեցուցանող հրամանին, և զի էր Սարգսի վարդա-
» պետի հոգացեալ, առեալ և զայն, և զայլ բանս սրբոց
» մեկնչացն՝ համառօտ զուգեաց առ իրեարս... և գրեալ
» ձեռամբ իւրով ետ նմա։ Արդ ես զայս տեսեալ վերջինս
» 'ի բնաւիցս, փցնամիտ աշակերտս սորին Գէորգեայ,
» անարժան քահանայ, պիտակագործ անուանեալ Երե-
» միայ յորջորջեալ, հետիոտն աշխատեալ երկու անգամ
» առ թագաւորն իմ երթեալ, խնդրեցի զարարեալ օրի-
» նակն. և վասն սիրոյ նորին ետուս գրել զսա Լևոնի գպրի
» լաւագիտեալ գրչի, 'ի յիշատակ բարի մեզուցեալ հոգւոյ
» իմոյ Երեմիայի, և ծնողին իմոյ Շահայի, որ բաղումս
» է աշխատեալ զհետ մեր, և հօրն իմոյ Կիրակոսի և
» քաւրն իմոյ Հեմիքուլոյ, որ ետ զրամ [Ս] 'ի գրող սորին,
» և Սարգսի քահանայի որ պատրաստեաց զնիւթ սորին»։
— Ի բանից Երեմիայի յայտ լինի յառաջ քան զամն 1295
յօրինեալ Գէորգեայ զզործդ. բայց է 'ի ձեռին մերում
հնագոյն ևս օրինակ, յորմէ յայտնի՝ զի թէ ընագիրն առ
թագաւորին կայր, սակայն վաղագոյն ևս ընդօրինակեալ
էր յայլոց. և հարկ ուրեմն է զի շարադրեալ լիցէ յառաջին
ամս պայազատութեան Հեթմոյ, 'ի միջոց 1289–92 ամաց.
քանզի յօրինակիս մերում գրէ ոմն ընտանեբար. « Ով
» եղբայր Սիմէոն, պիտի գիր գրեցեր, ապա սիրուն ես
» թատեալ. թատս ՁԽԱ. դեկտեմբեր ԺԷ », որ է 1292
ամին [1]։ — Յառաջին գլուխս մարգարէութեանն՝ առնու
Գէորգ և զմեկնութիւնս Ս. Կիւրղի, իսկ զԵփրեմին և
զՈսկիբերանի ընդ բովանդակ գործն, ընդ որս և զՍար-
գսին՝ նախ քան զինքն հաւաքողի, որ թէ ով էր՝ ոչ
գիտեմ. և 'ի հասանել մեկնութեանն 'ի բանն Եսայեայ
Տէր, ո՞ հաւատաց, անդ առատորէն հիւսէ զբանս նախ-
նոյն իւրոյ Գրիգորի վարդապետի՝ 'ի կարգս բանից երկս-
ցուն սրբոց հարցն. զուն ուրեք առեալ վկայութիւնս և 'ի
Գրիգորէ Աստուածաբանէ, նուազագոյն ևս 'ի Բարսղէ
և յԱթանասէ։ — Ի գրաւոր վաստակոց Գէորգեայ եր-
կոքին այսոքիկ աշխարհածանօթ են զգրագիտաց մերոց,

1 Այս ևս օրինակ գաղափարեալ է 'ի ընագրէ հեղինակին, որ-
պէս տայ իմանալ յիշատակ մի գրչին. « Ով երանեալ սուրբ ընտ-
» թերցողք, ծառայակիցք և եղբարք իմ 'ի Քրիստոս, 'ի տեսա-
» նելն զանհեղեռ և զանարհեստ գրիչս՝ աղաչեմ մի մեղադրեք.
» զի թէ և գոյր կարողութիւն փոքր մի այլ լաւ գրել, սակայն ոչ
» կարացի. զի կարի ստիպով յարտոյրք էի վասն օրինակին, և
» միայն յաւարտ եղանելոյն էր փոյթն և ոչ սրուեստ գրոցն. զի
» թէ և գիրս յոսի է, բայց օրինակիս [ընդարձակութեանն] մեծագոյդ է.
» որոյ աշխատողին 'ի սա՝ Տէրն տերանց վարձս տացէ, և ինձ մե-
» զուցելոյս. ամէն »։ — Միւս ևս ընդօրինակող յամի 1320, յետ-
ելեալ զընդարձակ մեկնութիւնս Եփրեմի, Կիւրղի և զՈսկիբերանի,
ասէ. « Թէպէտ սոքա իւրաքանչիւր ասացուածոքն կատարեալք
» էին յիւրաքանչիւր գիրս, և օգտակարք, բայց գրչաց մեծագունի
» կարօտեին և լայն մեծատար մուռց. յաղագս որոյ օգտէին, այլ
» գրեթէ ոչ ամենեքին։ Զայսոսիկ տեսեալ մեծիմաստ արքայն Հա-
« յոց Հեթումն՝ Միակեցն կոչեցեալ, և խնդրեալ 'ի հոխորտ վար-
» դապետն Ակռացոյ Գէորգ կոչեցեալ, որպէս զի ըստ յօժա-
» րութեանն իւրում՝ աշխատեսցի 'ի սմա, և ըստ խնամատարութեանն
» համառօտեսցէ և 'ի մի վայր հաւաքեսցէ. որպէս զի հանդի-
» պեալքն սմին՝ առանց խաշատանաց և ամենեքեան վայելեսցեն
» 'ի սոցանէ։ Իսկ նորա 'ի յանձն առեալ և կատարեալ զինդիրս
» նորա զեղեցիկ յօրինուածով, որոյ օրինակն՝ ահա առաջի կայ տե-
» սողացդ »։ Յայտ լինի 'ի յիշատակարանացս՝ վարվեալ ծառայութեան
գրոցն՝ բազմոց ընդօրինակութեամբ, յորմէ և մեծ վարի հեղինակին։

գրոցն, որպէս և սակաւ ուրեք զմերոյս Ներսիսի Լամ-
բրունեցւոյ, զԱստուածաբանին, զերկոցուն Կիւրղեանց,
զՆորհալւոյ և զԿիրակոսի ուրումն. 'ի 55 գլուխս կամ
ճառս տրոհեալ, և 'ի վերջ նոցին կարգեալ յորդորակս
համառօտս։ — Հայցմամբ նորին սրբայեղբօր բանասիրի՝
յամի 1283 գրեաց ևս Գէորգ՝ « Դրուատ ներբողական
» բանի յաստուածաբան աւետարանիչն Յովհաննէս, 'ի
» պատկառեցուցիչ խնդրոյ Յովհաննու եպիսկոպոսի եղ-
» բօր բարեպաշտ արքային Հեթմոյ, 'ի թուականին ՉԼԲ.
» Գէորգեայ վարդապետի երջանկի Սկեւռացւոյ ասա-
» ցեալ », որպէս ծանուցանէ խորագիր գրուատին, զոր
իմ չէ տեսեալ։ — Այս ամենայն ծանօթ երկասիրու-
թիւնք բաւականացին 'ի հաստատութիւն և 'ի յաւե-
լուած համբաւոյ և մատուրական զարգացմանն Գէոր-
գեայ, յոր անդստին 'ի մանկութենէն խնամով մարդէր
զնա քեռին իւր Գրիգոր՝ զիտապետ Ուխտին. « Յորում
» և քան զյոգունս առաւելեալ զտանէր. և յորժամ յար-
» բունս հասանէր հասակի, ընթանայր նա և յելս ա-
» ռեաւ. որ և դարձեալ լինէր անտի բազում բարգաւա-
» ճեալ փառօք, և եկեալ դադարէր 'ի տեղի իւր. և բնաւ
» ոչ այլ խիզ փափագէր՝ բայց վերծանութեան աստուա-
» ծային տուից. որով և գյողովս վարժէր՝ և կրթէր...
» և հրամանաւ հաստատէր, և գաւազանաւ ջահաւորէր.
» 'ի խոնարհութիւն կրթէր և յերկիւղածութիւն յորդո-
» ւէր ...։ Եւ այսոցիկ ամենեցուն նախ զանձն տայր
» օրինակ. զի զոր բանիւ ուսուցանէր՝ գնոյն և գործով
» կատարէր »։ — Մեծի համբաւոյ նորա և վարկի նշան
է և այն, զի ընդ սակաւուց ոմանց վեհից արանց՝ նչա-
նակի ամ մահուան իւրոյ 'ի շարայարութեան ժամանա-
կագրութեան Սամուելի, եթէ « Ի սոյն ամի (ՉԾ) փոխե-
» ցաւ 'ի Քրիստոս սուրբ և առաքինի վարդապետն Գէորգ
» Սկեւռացի »։ Իսկ աշակերտ նորին Մովսէս որ գրեաց
» Դրուատ բանի սուղ ինչ պատմագրարար յերջանիկ
» Բարձունապետն և 'ի քաղցրարարբառ վարդապետն
» Գէորգ Լամբրունեցի », նշանակէ յաւարտ բանին ըս-
տուգիւ և զժամանակ մահուանն. « Ճշմարտութեամբ
» քաղաքավարեալ 'ի կենցաղումս՝ հանգեաւ խաղաղու-
» թեամբ 'ի Քրիստոս յամենանն յանվարի, որ օր մեծա-
» սան էր ամսոյն, յաւուր չորեքշաբաթի », յ'ՉԾ թուին,
այն է վերջին ամ ԺԳ դարու (1300). որով մարթ է ա-
սել կնքեալ սորա և զաւրս ընտիր մատենագրաց մերոց,
զկնի իւր թողլով միայն զերկնակացին և զՄաշկևորցին՝
քաջընթաց հետեւողս։ Արատանայ Մովսէս 'ի գրուատն.
յեռլով զկէսն՝ որ է էջ մի բանի՝ հարիւրաթիւ գովասանա-
կան մակդրութեամբք. « Արին և վեհն և հռչակաւորն
« յամենայնի. առաքինին, հեզն, հանդարտն, խոհեմն,
» ողջախոհն . . . անհամեմատն յարդեան ժամանակիս,
» անմոռանն, անհանգուտնին... պատուական պարծան-
» քն ազգիս յարեթական, քաղցրաբարբառն ստոյգ
» յաւէտ », և այլն։ Եւ ոչ այսոքիւք շատացեալ՝ յաւելու
և Ողբս չափական բանիս, լաւագոյն քան զարձակ բանն,
թէ և անժաման յանարուեստ և գերարուեստ Ողբս Խա-
չատրոյ՝ 'ի վերհագոյն Լամբրունեցեաց. և ընդհատեալ
զչափականն՝ դարձեալ հետեւակէ տողս ինչ աւաղակա-
նքս. « Աւաղ ինձ յետնելոյս, թէ որպիսի հայր կորու-
» սի. զորպիսի դաստիարակ. զորպիսի յորդորիչ և մեղ-
» թարիչ... Ո՜ հայր պատուական, այլ ո՞չ գրես առ խս
» զան և զգիր քո պատուական. այլ ո՞չ լեամ գրերկրա-
» կան լուր քո 'ի հեռաստանէ » . . ։ Եւ մինանգամ 'ի
չափականն արաւէ. և հուսկ զայս կարգէ վերջաբան.
« Այս գծածք հանդիսի վասն երջանիկ առն Բարձունա-
» պետի Գէորգ անուն կոչեցելոյ, ոչ սուտակասպասու-
» թիւն կամ կեղակարծ բանից յօրանն, այլ ճշմարտիւ
» ստուգութիւն, առ 'ի յորդորումն զկնի եկելոց, 'ի փառս
» օրհնելոյն Աստուծոյ յաւիտեանս. ամէն »։ — Զողբն
չափականս կարգեմք 'ի ծանօթութեան՝ 'ի պարագումն
բանասիրաց [1], յորս նկատելի են բանքն,

« Իրրև զհօրանս հօտից այծից
Միշտ յորդիներ զարբրս տողից »,

և որ զհետ այնր՝ հինգ տողք։ — Մոռանայ զրուատիչն

1 Աւաղ ինձս թշուառութեան,
Անմխիթար սրգոյս գիպման։
Ըզքաղձալին իմ կորուսի
Զբարձունապետն գովելի.
Գէորգ անուն հռչակաւոր
Ամենեցուն զոլ հրաշաւոր։
Բազում որդիս 'ի փառս ածեալ,
Ցոլով բերմամբ բարգաւաճեալ.
Ծնաներ ծնունդ միշտ հոգեւոր
Զարդունարարն և ընտրհաւոր.
Մակեռակի տառիւք պճներ,
Հրաշիւք բանիցդն զարդարեր.
Գրախեցիս հմնաւորեր,
Դարձմամբ ըմբոյն ծանուցաներ.
Բարի բաշխմամբ զբանն ոզորկեր,
Կարգաւ ըմբոյն ուսուցաներ։
Թելադրութիւն տայր արհեստի,
Գրոյ և բանի յամենայնի։
Երկամբք միշտ գայր զաշակերտաբն
Պաճուճազարդ գործեր ընտրհաբ.
Ահարկու գոլով հեղգոց,
Միշտ յորդորող փութածելոց։
Մօտակայից էր խրախութիւն,
Հեռագունիցդն տրամութիւն։
Ականատեաքն բերկրէին.
Որք վրիպեէինն՝ տրամէին։
Զի բանքն՝ օրէնք էր տիրապէս,
Այ ընկալուչքն ստուգապէս։
Սուր երկայրի՝ որպէս ասի,
Միշտ հատանող գոլ անուզղի.
Հրով հոգւոյն միշտ հրաղնեալ,
Զխռուազգնսքն տուչքրեր։
Բեղմաւոր բուսոց բարեաց,
Թելադրութիւն տայր աւետեաց։
Ցեռամբ գրեալ բանիւ պատմեալ՝
Զամենեսեան Ցեռան աւանդեալ,
Ըստ հրամանի Ցեռան Ցիսուսի
Եւ մեր Փրկչին ամենայնի.
Զորրս բանիւ վարդապետէր,
Գործով ըմբոյն օրինակեր։
Դաստիարակ գոլ ազգատաց,
Եւ արքանեակ միշտ օտարաց։
Հիւրոց հնազանդ գոլ և հլուս,
Ըստ մեծի հաւն Աբրահամու.
Սպասաւոր և պաշտօնեայ,
Եւ արքանեակ որպէս ծառայ։

կամ ոչ պարզապէս յիշէ զմիւս եւս յոյժ պիտանի հասարակաց գործ, որ և յայտարար ստուգասէր և չափագիտակ հանճարոյ Գէորգայ. այն է ընտրութիւն և հաստատութիւն բանից և եղանակաց Շարականաց մերոց: Զայնոսիկ է բանաստեղծաց, զի 'ի ձեռագիր յիշատակարանս երգարանիս, անդստին 'ի սկզբանէ ԺԴ դարու՝ 'ի յոլովս նշանակի՝ գրեալ ըստ լաւ և ընտիր կամ ստոյգ օրինակին՝ որ կոչի Խոկցի. և յոմանս վկայի զի ընտրողն այն էր Գրիգորոյ՝ առաջին վարժապետ Սսայ և քաջ քարտուղար, մականուանեալ Խոռ: Այդ, Աբաքէլ Սիւնեաց եպիսկոպոս 'ի Լուծմունս Սահմանաց Դաւթի Անյաղթի, ասէ, ճըշմարտեալ բանք երգոցս՝ « Խկու օրինակն է՝ 'ի Շարականացն, զոր մեծ վարդապետն Գէորգ ուղղեաց, այն՝ » որ զԵսայի մարգարէն մեկնեաց 'ի խնդրոյ Հեթումի » թագաւորին 'ի Սիս... զի արհեստն առոգանութեան » խառնեալ լեցի 'ի յերգսն. որպէս նոյն Խոյնն օրի- » նակն է, զոր սահմանեաց վարդապետն Գէորգ »: Որ- պէս գուշակի Խուլն զեղանական հշդրտեաց, իսկ Գէորգ զբանն և զեղանական. միաբանն վաստակելով ընդ Գրի-

գորի, թէ յետ նորա, ոչ գիտեմ. զի չկ այլ ինչ յիշատակ զսմանէ[1]: — Այս յիշատակ և բանքն Մովսիսի և այլք եւս՝ ցուցանեն, զի ոչ միայն քերականական շարակարգութեան բանից և վայելուչ գրութեան, այլ և ուղղագրութեան և պատշաճ տրհութեան նոցին և կէտադրութեանց՝ քաջ հմուտ և հմտացուցիչ էր Գէորգ, մանաւանդ յընդօրինակութիւնս Ս. Գրոց, որպէս թէ ոչ այլ ոք 'ի ծանօթից մերոց մատենագրաց, բայց 'ի բազմահանճարն Սարկաւագ վարդապետէ: Գոնէի առ մեզ Աստուածաշունչ գիրք մի ըստ այսմ քերականական արուեստի գրեալ, յոյժ ճարտար և գեղեցիկ, իբր 20 ամաւ ետեթ զկնի մահուան Գէորգեայ (1319), և 'ի նորուն իսկ ճշգրտագիծ օրինակէ, որպէս ծանուցանէ գաղափարողն, ասելով. « Ես մեղաւորս Յոհաննէս ըստ կարի գրա- » փագս իմ լցի՝ յանկ ելանելոյս. և այս եղև ներելումն » Աստուծոյ... և զայս ոչ ասեմ վասն գեղարուեստոյն շա- » բարգութեանցս, այլ վասն ազնիւ օրինակիս, զոր սուրբ » և երանեալ վարդապետին Գէորգեայ ձեռացն շարահիւ- » սեալք[2] էին »:

Ոչ հրամայեր կամ պատուիրեր,
Այլ զնոյն անձամբ միշտ վճարեր.
Մխիթարեր զվշտացեալսն,
Ուրախ առնէր զսիրտս ցաւալսն:
Ճանապարհ յաւէտ հորդէր,
Եւ ժողովուրդ Տեառն կազմէր:
Պարիսպ գող պըզնձի,
Իմանալի սիւն երկաթի.
Զանձրն մատնէր 'ի մահ վշտի
Վասն աղքատի և օտարի:
Պետրոսաբար 'ի մահ դիմէր,
Եւ զՅիսուսն պատկեր բերէր.
Զաեր աշխարհս մեռուցանէր,
Ինքրն սիրոյ սմին մեռանէր:
Վիշտս յոլով յաւէտ կրէր,
Ճշմարտութեան վասն ճգնէր:
Զանձն իւր 'ի մեծ վշտէ պահէր,
Միշտ 'ի բարին մեզ թելադրէր:
Տիւ ըզգիշէր յաւէտ գործէր,
Եւ զոհն անդրյլ անցուցանէր.
Զաչերս յաւէր յաւէտ 'ի լոյս,
Զմտաունս շարժէր 'ի գործ պիտոյս.
Իբր զհօրանս հօտից այծից
Միշտ յօրինէր զաբրս տողից.
Նռակի կերպիւ կազմէր,
Գեղապատճոյճ յաւէտ գործէր.
Բոլորակ և ազիւսակ
Եւ զվերջակիր տառս հրեշտակ.
Գեղեցիկ և հրաշալի
Եւ զճնաղարդ յամենայնի:
Զի ոչ յարդեանքս ժամանակ
Ոք գտանէր նմին հանդուսակ,
Արուեստաւոր և գործունեայ
Պրեսբիտերս որպէս պիտոյ:
Խոհեմ և հեղ հոգւովքն լի,
Բան Աստծոյին ընտրականի:
Մշտամնունչ հեծեծանօք,
Զցայգն հակէր միշտ արտասուօք.
Անդրյլ և անդադար՝
Որպէս մեղու 'ի գործ յօժար.
Պահաք պնդէր զանձն և ճնչէր,
Զպատրաստական մարմին խաբէր:

Զպէտս իւր յաղքատացն նըւիրեր,
Ցաւէտ զնոսին մխիթարեր:
Եկին հասին ամբքն սովոյ,
Որ զամենայն մարմին կասու.
Նա արտասուէր և հառաչէր,
Զինքն ընդ նոսին յաւէտ մաշէր.
Պատուիրէր խահարարին՝
Խնամ տանել միշտ աղքատին.
Ինքն ոգորեր ընդդէմ սովին,
Սպանանելով զիւրքն մարմին.
Պատառ հացիւ զինքրն պնդէր,
Կամ դուշաբեռ պիտոյք զինչ էր:
Խուլն իւր մարտի տեղն լիներ,
Հանդիսան արտաքրս թէ դիպէր.
Նա ևս երկոքն յայն գտաներ,
Ի սպառ հիւրոցն ոչ դադարեր.
Եւ թէ տնօրէնքն տրանջէր,
Ինքրն պատրաստ զինքեան ասէր.
Զտրտունջ նոցին միշտ նըշանջէր,
Եւ գյոդրդման բանրս խօսէր.
Որովք յաւէտ պատկառէին
Եւ 'ի նոսն գործքն ժրանային:
Ինքրն ընակեր յանապատ,
Գործքն պատմեր 'ի յաշխարհի:
Զօրէն Ճգնան ազդողական,
Համբաւ հնչէր միշտ հիական:
Այսպիսի նախանձ բերեք
Որ ի յաշխարհի սեր վկայէք:
Այսպիսի գործս ստացէք
Որք զկենցաղս յաւէտ ունիք:
Այսպիսի անուն բարի
Ստացէք յաւէտ 'ի յաշխարհի »:

1 Հնագոյն Շարական Խկցի ծանօթ ինձ՝ գրեալ է 'ի Թուին ՉԾԸ (1309): Կոչի յօրինակի մեում և Խլա- Պապա- շարական:

2 Ճարտար են և ընդօրինակողին Յովհաննու ոչ միայն գիծք ձեռաց՝ այլ և քերական և չափաբան յիշատակէն. յորոց՝ քանզի պահկասէ բուն յիշատակարանն, ոչ կարեմ հաւատել զոր կարծեմս՝ թէ աստէն իսկ 'ի Սկեւռայս գրեալ իցէ մատեանն. իսկ ֆէլլոպաճոյճ շարագիր՝ իմանամ՝ գնկարիչն Սարգիս, որոյ Ճարտարութիւն տեսցի յետոյ 'ի ստորագրութեան վանաց Դրազարկի. բայց գրեալ է մատեանս վասն վանաց Խորվիրապի, ուր զառաջին աշակերտեալ տեսաք զԳէորգ. քանզի այսպէս տողն Յոհաննէս, մաղթելով առ Տէր՝ վասն գրոցն.

Բաղում անգամ կոչեցեալ է Գէորգ՝ դարձուցանող և ուսուցիչ[1] և խրատիչ, այլ ոչ յայտնի պարզապէս թէ էր կարդեալ և առաջնորդ վանացն, և կարծեմ թէ ոչ. մի՝ զի ոչ գտանի գրեալ. և երկրորդ՝ զի յամի 1285 զայլ ոք կոչէ առաջնորդ՝ ծանօթ բազմագրին Ստեփանոս Գոյներ Երիցանց[2], ընդօրինակելով զԱստուածաշունչ գիրսն վասն Աստուածատրոյ քահանայի և խաչատրոյ պատանւոյ, « յաստուածապահ սրբարանս մեծի ուխտս » Սկեւռայի, ընդ շքով թեւոց աստուածազօր սուրբ Նշա- » նիս և սրբոյ Փրկչիս, յառաջնորդութեան Տեառն Մի- » նասայ »: Եւ դարձեալ յետ սակաւ ամաց առաջնորդ կարդեալ Սկեւռայ վկայէ զանձնէ Կոստանդին Բ Հռոմկլայեցին, հրաժարեալն կամ հրաժարեցուցեալ 'ի կաթողիկոսութենէ (1290). զոր՝ Ստեփանոս Ուռպելեան ասէ, Հեթմոյ թագաւորի համախոհիւքն՝ ոչ միայն մերժեալ 'ի գահէն, այլ և կապանօք արգելեալ 'ի բանտի 'ի Լամբրոն՝ բովանդակ ամս. իսկ Կոստանդին մտերմաբար և գովութեամբ արձանագրէ զՀեթմոյ, յամի 1293, յարծաթի տախտակս, մինչ կայր 'ի գլուխ տեսչութեան վանիցն և նահանգին: Այս լուեալ զգոյժ գերութեան և աւերանաց կաթողիկոսական աթոռոյն Հռոմկլայ, և ըստրբութեանցն յաղարտ վարել, 'ի սիրտս իմն հոգւոյն, կամ յապահովել զմասն ինչ սրբութեանցն՝ որ գտանէր առ ինքեան, ետ կազմել մեծ քառակուսի Պահարան արծաթի նշխարաց սրբոց իբրև վաթսնից կամ աւելի, զրաշմելով զիւրաքանչիւր անուն խորհրդական բանիւք, և երկայն չափաւոր յիշատակարանաւ. զորմէ կարէաք հաստատիլ ընդարձակօրէն տալ ծանօթս ուրոյն գրուագաւ, յաւարտ գիտելեացն զվանայ և զվանականաց Սկեւռայ: — Մեծագոյն և մեծահաւատ շինող Պահարանի նըշխարացն զոր և Սրբարան անուանէ ինքն, յետ Գրիգորի Անաւարդեցւոյ վերադարձաւ 'ի գահն կաթողիկոսական, և կալաւ յամէ 1307 ցամն 1323: Յայնմիջոց նորա և համանուն Կոստանդին Գ՝ էր հայրենեաւքն Լամբրունեցի, և կացութեամբն՝ Դրազարկեցի: — Իսկ 'ի յիշատակեալս 'ի Սկեւռայ՝ առ նախագրեալն Կոստանդեան՝ գտանի և տէր Ստեփանոս Սկեւռացի, վարժեալ և սնեալ յաթոռն Սիւնեաց, որպէս ասէ Պատմիչ աշխարհին, Ուռպելեանն. ուր դարձեալ առաքեալ էր՝ վասն հրաւիրելոյ զարեւելեայս յընտրութիւն կաթողիկոսի՝ յաթոռանկուսութեանն Կոստանդեայ Բ. և էր հաւանօրէն ինքն Ստեփանոս յայնժամ առաջնորդ ուխտին և թեմին Սկեւռայ: —

« Ժառանգեցս Լուսաւորչին պայազատից,
Դպրեկարաբ՝ ջամբեցողաց զկաթն խմաստից:
Որոց նանին՝ ասե՞մ յաշխարհն արեւելից,
Ուր ապրեցաւ Սուրբն անվնաս 'ի մէջ ագռից »:

Զայս արուեստս քերականական գրչութեան խնամով պատուեալ Մովսէս՝ ոչ միայն բանք գրուատիցն և ողբոց ցուցանեն, այլ և ասացեալն 'ի յառաջաբանի իւրոյ Մեկնութեանն ժամագրոց. « Կըրթութիւնն յոյժ պէաք են գրոց սրբոց և ներկուս վերծանութեան, » այլ և արտաքնոց ևս տեղեկութեան զուսցարութիւնցն, և բա- » յիցն և բառից, և ճանաչող միտս ունել, զի կարող լինիցի ընտրու- » թիւն առնել խորթաստեակ բանիցն ». և այլն: Եւ ոչ միայն նեբակրթեալ յայսմ առ ոսս Գէորգեայ, այլ և ինքնին զայլս երևի կրթեալ, որում հաւատս ընծայէ մեզ նորին իսկ Մովսէսի աշակերտ՝ վարդապետն Գրիգորիս Խաբիբդաչ, գեղեցկագիծ մատենից մեում, գրեալ յամի 1314, սատարութեամբ և իւր յատուկ աշակերտի. յորում և ասէն. « Ի գալ վարդապետին Մովսէսի 'ի Եկեղեաց բա- » զում գրենաց, յորդորեալ և առեալ զմեզ՝ ընակեցաք 'ի Դարա- » նաղեաց գաւառն, 'ի լեառն սուրբ և մեծ Լուսաւորչին մերոյ, ամս » վեց »: Արժան համարեցայ յերկարել զբանս՝ 'ի ընդրհն Գէորգեայ և գրաւոր արուեստին, և արուեստագէտ վարժապետացն և աշակերտաց, յորս մի ըստ միոջէ առանձեալ գտանեմ զարուեստս ցամն 125, այսու կարգաւ.

Գէորգ (Ա.) հետեւող Ս. Լամբրունեցւոյն
Սարգիս Գրիչն
Գէորգ (Բ.) Սկեւռացիս
Մովսէս Վ. Երզնկացի
Գրիգորիս Վ. Խաբիբդցի
Մխիթար կրօնաւոր:

1 Յաշակերտս նորա յիշի և Պարտիրոս վարդապետ յամի 1305:

2 Որոյ ձեռնագիր Եզեքիայի մի ևս պահի 'ի Մատենադարանս ա- Թոռոյն Լէջմիածնի (թիւ. 667):

ՍՐԲԱՐԱՆՆ ՍԿԵՒՌԱՅ

31. Մերթ այսպէս և մերթ Պահարան, կամ Խորհրդարան և Հանգիստ մասանց կամ Նշխարաց Սրբոց՝ անուանէ կաթողիկոսն Կոստանդին Բ, հեղինակ Նորին, եթէ օրէն իցէ այսպէս կոչել զնա, որ 'ի ձեռն ճարտարաց ետ ձևել, ձուլել, քանդակել և գրել զմեծ տախտակաձև տապանակն՝ բազմաթիւ սրբոց նշխարակիր, և մի 'ի սակաւուց յանհուն հինից զերծելոց՝ հրաշակերտ յիշատականոցաց Հայաստանեայցս [1], յոր պքանչանայ այսօր ժողով հնասիրաց Եւրոպիոյ՝ դիտելով զլուսատիպ պատկերն 'ի հանդիսարանի յոգնահոյլ հաւաքմանցն 'ի հոլանդեանն Լէյտայ. յետ բազում դարուց թաքնութեան և բազում ևս ամաց յայտնութեան և վերստին ծածկութեան՝ միւսանգամ 'ի վեր երևեալ 'ի հերուն, և հաշակեալ յայսմ ամի (1883), մինչ զստորագրութիւնս Սիսուանայ յարմարէի: Թողից նախ ինքեան կաթողիկոսին՝ ակիզբն առնել ծանուցանել մեզ զինչն և զէրքն, հանդերձ այլ ևս դիպուածով ժամանակին. զոր չարահիւսեալ 'ի 104 չափաբան տողս ութոտնեանս, ետ ամփոփել 'ի 43 տողս խիտ առ խիտ տառիւք կիտուածագործ քանդակեալ միահետ, լոկ կիտովք



Տես յէջ 14։

տրոհեալ, 'ի կուսն արծաթեղէն տապանակին՝ առըրնջակնին դաս դաս Սրբոցն նշխարաց: Արդ այս է գիր յիշատակին, ըստ ուղիղ կամ խոտոր տառագրութեանն:

Յեւթ հարիւր հայոց թուական:
Ընդ քառասուն ամաց լրման:
Եւս եւ երկուց ի սոյն պայման:
Որչափութե լցեալ այսքան:
Ես կոստանդին անձն տարտամ:
Որ եմ ծառայ տն անարժան:
Անեալ եմ ի կլայն հռոմայական:
Ուր մեծ աթոռն եր հայկազնեան:
Յորում գլուխն պատուական:
Նստիւր ի գահն պետական:
Հայրն հանուր հայոց լրման:
Որ յի գոլով փոխան:
Յաջորդ գնդին սբ գրիգորեան:
Լուսաւորչին ըղհայաստան:
Յորոց սկսեալք ըցմեզ հասան:
Կաթողիկոսքն սրբազան:
Որք եւ եղեն ինձ պաշտպան:
Խնամեալ գթով զիս հայրական:
Ուր եւ ի վեր քան զիմն արժան:
Հաւատացաւ ինձ աստիճան:
Նստիլ յաթոռ այցելութեան:
Գաւազանաւս հովական:
Արդ ըստ ածենան յաջողման:
Ի դեպ ժամու եւ պատահման:
Բարոյն հեթմոյ արքայութե:
Որ գիտնական եր սրբազան:
Եղե յաթոռ վսեմական:
Սկեւռա վանացս ի հովութեն:

1 Փուանկ ծանօթարար Պահարանիս, հմուտն Ա. Գարրիէր, այսպէս խորհրդածէ 'ի ծանօթութեանն, զոր՝ յիշեսցուք յետոյ. » Le monument qui va nous occuper, mérite certainement d' être classé au premier rang parmi les débris de l'art chrétien du moyen âge dans la Petite Arménie. Il semble être unique, et je n' ai rien pu découvrir qu' il fût possible d' en rapprocher. » — A. Carrière.

Եղայ տեսուչ այն մեծի տան:
Եւ վիճակին իւր սեպհական:
Այլ երանի թէ աստ վախճան:
Աւնոյր զրոյցս պատմութեն:
Աւաղ մեծի թշուառութեն:
Բո(լո)ր ազինս հայկական:
Ամաւք յառաջ քան զթուական.
Առեալ եղեւ հռոմկլայն:
Նստեալքն երբեմն անդ բնական:
Եղեն վարեալք ի գերութեն:
Եկեղեցիքն երկնանման:
Յանհաւատիցն կոխեցան:
Եւ սրբութիւքն ածական:
Ջեռաւք պղծոց չաւչափեցան:
Եւ սբ մատեանքն ածաբան:
Ի նախատինս ցրուեցան:
Սբ հայրապետքն եւ որք նորայն:
Գերեալք յաշխարհն տաճկաստան:
Վայ եւ աւաղ հազար բերան:
Ընդ մեծ չարեացս որ մեզ դիպան:
Փղձկիմ յիշմամբ այնց սրբութեն:
Յորս եմ սնեալ ի մանկութեն:
Զոր յար ի միտս իմ նկատմամբ:
Նստիմ ի սուգ նըսեմական:
Այլ զեթեղել իմ ի սկեվռայն:
Ստիպեց փափաք զիս ցանկութեն:
Գնել զայս մասունս ի հանդըստեան:
Ի յոյս մեծի ինձ բարութեն:
Եւ ի սփոփանս այս տրտմութեն:
Որ միշտ խոցէ զիմ խոհականս:
Ուստի չքեղ զայս խմբարան:
Սբ նշխարացս պահարան:

Կազմել ետու յոյժ հրաշազան:
Ըստ սրբութենց ճահողական:
Փորձ արծաթով եւ պատուական:
Խառնեալ ոսկով բոցանման:
Պճնեալ ի զարդ զարմանազան:
Յաւրինուածովք վայելչական:
Ականակապ ընդելուզմամբ:
Իբր զտազտակն ահարոնեան:
Սբոցս որ աստ հավաքեցան:
Սբ ոսկերաց հանգստարան:
Որպէս արձան ինչ բանական:
Հաչակ սրբոցն յաղթութեն:
Նշխարքս սբ որ աստ եղան:
Զորս ոչ արժե նիւթք ամենայն:
Դեղ են ցաւոց բժշկական:
Մեծ աւգնականք ազգի մարդկան:
Սաստաւղք այսոցն չարութեն:
Կոչաւղք զհրշտակս մեզ պահապան:
Յորում եւ ես յոյս ապաստան:
Շինեալ պարկեշտ զայս սրբարան:
Սրբոցն ընձայ հաճոյական:
Եւ ինձ նշան բարոյ յիշման:
Նայ եւ իմոցն որ զիս ծնան:
Եւ ընաւ ազգիս լրութեն:
Զոր տամ ընձայ նուիրական:
Փառաց փրկչին տնաւրենութեն:
Ի տաճարին իւր սրբութեն.
Ի սբ փրկիչն որ 'ի սկեւռայն:
Զոր պահեսցե տր ընդ երկայն:
Աւուր յայնչարժ հաստատութեն:
Եւ զբոլոր զհայաստան:
Աւցե ի գոգն ծնողական:

Արդ ես ձայնեմ ձայն ըղձական։
Եւ բարբառեմ բան մախթական։
Ի յնթանուրս կարդամ զայս բան։
Սփռեմ զհայցուածս աղերսական։
Որք տեսանէք զայս պահարան։
Հրպէք 'ի սբս որ աստ եղան։
Զի հայցուածովք ձեր մախթական։
Խնդրուածաւքն աղերսական։
ԶՀեթում արքայն հայոց ազնեան։
Թագել ընդ սբ յարքայութեն։
Եւ երախտեցն որ յիս հասան։.
Առնուլ զվարձս հատուցման։ ամեն։

Այս ծանուցաւ պատճառ և որպիսութիւն նկաթական ճոխազարդութեան Արքայանին. որոյ կմախք կամ հիմն հաստատուն է տախտակ փայտեղէն, այլ համակ պատեալ ոսկեզօծ արծաթի թիթղամբք, 0,63 Զ. երկայն, 0,35 լայն, և 0,075 թանձր. զբովանդակ կուռն կամ զթիկունան ծածկէ արձանագրութիւնն, որոյ տառք են իբրև 0,015 մեծութեամբ։ Յառաջակողմն կամ երեսն ունի զրունս երկփեղկիս. որոյ վերին կամ արտաքագոյն երեսն՝ արդ մերկացեալ 'ի Նախկին պաճուճանացն, ծածկեալ է ոսկեզօծ թղթով, իսկ մէջն արծաթի թիթղամբ քանդակազարդ է և տառագրեալ. և բացեալ՝ երևեցուցանէ երկորդ զոյգ ներքին զրանց՝ քանդակեալ և տառագրեալ, և յայժմուս սևեռայլինդ փակեալ մածեալ, թաքուցանելով զներքսագոյն խորանն, զոր յետոյ հետազօտեսցուք։ — Արտաքին զրանցն գլխաւոր պատկեր է Աւետումն Ս. Կուսին. աջակողմեան փեղկն ('ի ձախակողմն հայեցողին) կերպարանէ, և գրով իսկ նշանակէ՝ զհրեշտակապետն Գաբրիել. յորոյ վերոյ 'ի բոլորակի կամ մետալի՝ Սբ Յովանէս. 'ի ստորև՝ Սբ Դաւիթ. 'ի շուրջ եզերս փեղկին բարձրաքանդակ գրեալ են ստոր և անտի պատկերացն՝ բանք պաշտաճեալք Նոցին. որպէս, Յովհաննու, Ա-

Ս. Վարդան. Տես յէջ 17։

հայ զաւն Ա.Ճ - որ բաւնա զմեղս աշխարհի. Գաբրիէլի, Ուրախ լեր բերկրեալդ. Տր ընդ քեզ. Աւրհնեալ — ես դու ի կանայս. Հոգի Սբ եկեսցէ ի քեզ. 'ի կողմանս Դաւթի, Լուր դուստր եւ տես — խոնարհեցո զունկն քո։

Յահեակ փեղկին՝ միջին և մեծ քանդակպատկեր է Ս. Կուսին բազմելոյ յաթոռ անանար, առ գլխովն գրեալ Մայ-ր Ա.Ճ, յեզերս շրջանակին՝ Աճավասիկ կամ աղախին տ՞ն — Եղեցի ինձ ըստ բանի քում։ — Ի վերոյ՝ բոլորակ պատկեր Նախավկային, բուրվառ յաջում, և որպէս թուի՝ քար յահեկում, խորագիր ունելով Սբ Ստեփանոս. զեզերբք շրջանակին՝ բան Սրբոյն, Ահա տեսանեմ զերկինս բացեալ եւ զորդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Ա.Ճ։ — Ի Ներքոյ Ս. Կուսին է բոլորապատկեր Թագաւորին՝ փիլոնաւոր կամ քղամդաւոր, շրջագրութեամբ Հեթում Թագաւոր-Հայոց, 'ի ձև աղօթականի, որոյ և հայցուածն չորս տող տանաւոր զրի զեզերբք փեղկին, բայց սկսանի 'ի բոլորակի պատկերին, իբրև 'ի բերանոյ հայցողին, Բարե . . . .

Բարեխաւսեայ մայր ա՞յ
Անճառ ծնելոյն ի քեն որդո
Վասն կամաց իւր հաշտելո
Ընդ ծառաիս իւրոյ հեթմո։

Զաւրն անեղի եւ անեղակից բանին ծնաւղ..
Եւ բոլորից սրբարարի սբ (մկրտ) աւղ..
Թագավորին երկնաւորին նախ վկայաւղ..
Որք առ ՔՆ էք համարձակ բարեխաւսաւղ.˙.
Նիւթոյ հայցման լերուք Նմայ ձիր նվիրաւղ..
Միշտ Սկեւռային խնամաւք լինել անշարժ պահաւղ..
Թախանձելով առ Նոյն լերուք կրկին մաղթաւղ..
Գոլ ըզՀեթում յերկար կենաւք Հայոց տիրաւղ.˙.
Հայուն վերին արքայութեն ունաւղ փականց..
Ով եւ անաւթ կրեալ զՅ՞ն ի մէջ ազանց..
Սբ Թադէոս տվեալ բժիշկ տան աբգարանց..
Տր՞ սբ Գրիգոր Նոր առաքեալ հայաստանեանց.˙.
Նուիրեմ մաղթանք ձեզ որոց աստ սբ Նշխարաց..
Գրողիս ըզձեզ աստ ի հանգիստ պատվոյ փառաց..
Ի ՔԷ խնդրել ջնջումն իմոց մեղաց..
Նոյն եւ բոլոր Հայոց փրկիլ ի փորձութեանց..˙

— Ի վերին սրանկիւն ծայրս փեղկիցն՝ որք արդ անգիր են և անքանդակ, հարկ է թէ գոյին 'ի Նախնումն՝ որպէս և երևին իսկ ընդ աղօտ հետք ինչ՝ տառատիպք։

Ճոխագոյն ևս են քանդակք և գրուածք ներքին դրանցըն. որոյ աջակողմեան փեղկին մեծ քանդակպատկեր է Սբ Գրիգոր-Լուսայվորիչն. յորոյ վերայ 'ի շրջաբոլորին՝ առաքեալն Սբ Պետ-րոս. 'ի ներքոյ Սբ Ստուատիոս. 'ի ձախակողմեան փեղկին հանդէպ Լուսաւորչին է Սբ Թադ-եոս, օրհնաբաշխ աջով. 'ի վերոյ՝ հանդէպ Պետրոսի՝ երկայնագլուխ և սուսերակիր Սբ Պաւղոս. 'ի Ներքոյ՝ Նոյնպէս սուսերամերկ սպարապետն Հայոց Սբ Վար-դան։ Յեզերս փեղկիցն երկուստեք գրեալ են ութ զոյգ տողից երկոտասանոտնեայ չափաւ, որոց առաջնոյն սկզբնատառք կազմեն Հեթում Թգ, երկրորդին՝ Կոստնդին. գրութիւնն սկսանի յաջմէն 'ի ներքին անձուկ եզերաց կամ բարաւորայ, խաչանշան ունելով 'ի վերայն, †, և նշանակելով զՍուրբսն որ 'ի պահարանին.

Ի վերոյ փեղկից ներքին դրանցս՝ յերկոսին անկիւնս ճակատու պահարանին են սուղ ինչ փոքրագոյն շրջաբոլոր քանդակպատկերք. աջակողմանն՝ փոքր տառիւք գրեալ Հեպերքոս [1]. ձախակողմեանն ոչ ունի կամ ծածկեալ է

Հեթում Բ. Տես յէջ 14 և 17։

խորագիրն. իսկ պատկերն՝ ձևով ճակատուն և բանալեաւն 'ի ձեռին՝ բերէ զկերպարան Ս. Պետրոսի առաքելոյ, մինչ որ հանդէպ Ս. Պօղոսի եդեալ և գրեալն է Ս. Պետրոս՝ 'ի դէպ է լինել այլոյ ուրուք. և զի և չէր հարկ կրկնել զմի նոյն անձն՝ թուի արուեստաւորին շփոթեալ զանձինս և զանուանս. և հարկ է թէ այն՝ զորով գրեալ է Ս. Պետրոս և բերէ զտիպ իշխանական՝ զետեղելի էր հանդէպ Ս. Հիպերիքոսի, և է հաւանօրէն Սբն Վարոս. քանզի 'ի նմին ձախակողման նշանակէ վատիկանեան պատճէն վերնագրութեանցս, Սբ Վարոսի մասն։ — Վերագոյն ևս 'ի ներքոյ զարդու ինչ ճակատու պահարանին՝ գրեալ են, ստոր՝ Սարգիս, անտի՝ Բագոս [2]։ Յեր-

1 Ըստ վատիկանեան պատճենին, զորմէ լիցին բանք յետ սակաւու միոյ, գրեալ էր Սուրբ Հեպերիկոսի մօտն։

2 Ի վատիկանեան պատճենին հանգոյն առաջնոյն յաւելուածով ևս գրին, Սուրբ Սարգսի մօտն. Սուրբ Բագոսի մօտն։

կոսին կողս պահարանին մէն ինն բոլորապատկերք են Սրբոց՝ հանդերձ անուամբքն քանդակեալք.

'ի միումն,	Սբ Եսայի (մարգարէ)
Սբ Յակոբոս	Սբ Եղիայ (մարգարէ)
Սբ Յուդայ	Սբ Դիոնեսիոս
Սբ Թումաս	Ածաբան
Սբ Սիմոն	Սբ Ոսկեբերան

'ի միւսումն,	Սբ Մովսէս
Սբ Անդրէաս	Սբ Սիմէոն
Սբ Փիլիպոս	Սբ Նիկաւղիոս
Սբ Բարդաւղիմէոս	Սբ Իգնատիոս
Սբ Շմաւոն	Սբ Բարսեղ.

Այսչափ ինչ երևի արդ 'ի վերայ հոյակապ Պահարանիս, յորմէ կապտեալ կողոպտեալ են ոչ միայն յիշեալքն և եդեալք 'ի կողմոլէն (Կաթողիկոսէն) ընծայուցեալ անօթքն, այլ և Նշխարք Սրբոցն. յորս՝ որպէս յանուանցն գուշակի՝ գոյին և չքնաղագիւտք ոմանք, օրինակ իմն Մարգարէիցն. ձեռքն սեղանակապուտք այլայլեալ երևին և զզարդս ներքին և արտաքին դրանցն, յորմէ և ծածկեալ դրուածոց ինչ և տաուից եղծեալ. և ոչ այսչափ միայն, այլ և որպէս նախդ յիշեցաւ, բևեռեալ պնդեալ են զներքին փեղկան ընդ ներքսագոյն դիմի տախտակին, յոր անշուշտ հաստատեալ էին յոլովք կամ համօրէն իսկ նշխարքն. զներքսագոյն զայն երեսս՝ կապտեալ 'ի նշխարաց և 'ի զարդուց՝ առաջի առնէ փոքրացուցեալ ձեւանշան արծաթեայ պատկերի (էջ 107) Խաչեցելոյն Քրիստոսի, բարձեալ այլովքն հանդերձ 'ի տեղւոջէն՝ ուր կայր տախտակին և կիսով դարու յառաջ, գուցէ և ոչ շատ ամօք յառաջ. և զորոյ գլխոյն գրեալ էր Յս Նազաւրացին Թգր Հր...: Եւ որպէս ծանուցանէ ստորագրութիւն մի[1] յիշատականոցիս գտեալ 'ի դիւանս Վատիկանու, շուրջ զետեղեալ էին նշխարք Սրբոցն և դրոշմեալ անուանք նոցին, այլ յոլովից եղծեալ և մաշեալ էին և յայնժամ. երևէին միայն 'ի վերայ աջոյ Խաչեցելոյն,

Յովանէս:	Թումաս:
Յակոբ:	Բարդաղոմոս:

'ի յահեկումն 'ի վերին կողման ոչ նշմարէին տառք. իսկ 'ի ներքոյ աջոյն՝ երևէին անուանքս.

Թումաս:	Յակովիկ:
Փիլիփէ:	Մերկերիոս:
Ստրատիոս:	Վահան:
Վարդան:	Անդրէաս զաւրավար:
Արդեմիոս:	Քրիստափոր:
Կիրակոս:	

'ի ներքոյ ահեակ բազկին՝ երեքին այսոքիկ անուանք.

Գրիգոր:	Փեփոն:	Յակոբ Սրճ: †

Եւ 'ի ստորև պատուանդանի խաչին՝ միակս այս, Ստեփանոս, որ թերևս ոչ զմեծի Նախավկային, այլ զաւրուեստաւորին նշանակիցէ անուն. զի չիք այլ ինչ նշանակ և վկայութիւն անձին և տեղւոյ շինութեանն, այլ ինձ թուի 'ի սմին իսկ նահանգիս Սկեւռայ կամ 'ի Սիս եղեալ, խնամօք երկոցուն այնոցիկ սրբասիրաց, կաթողիկոսին Կոստանդեայ և թագաւորին Հեթմոյ Բ:

Անյայտ է և պատճառ և ժամանակ փոխադրութեան սրբազան Պահարանիս յիտալիա. արդեօք 'ի նոցին իսկ միանձանց վանացն Սկեւռայ խուսելոց 'ի նուաճմանն Սիսուանայ՝ յայլազգեաց. եթէ ընծայ առաքեալ 'ի մերոցս պայազատաց՝ յարևմուտս, կամ թէ 'ի գերութենէ թափեալ: Ոչ է մեզ յայտ և այն՝ թէ յոր կողմն Իտալիոյ զառաջինն պահիւր, 'ի Հռոմ թէ յայլում քաղաքի. բայց յայտնեցաւ 'ի մերում դարու ժամանակի, և նախ 'ի լոյս եհան մերազնեայ պաշտօնեայ մի Սարտենիոյ կամ Բիեմոնդի թագաւորութեանն, Պր. Աստուածատուր Փափազեանց, տեսեալ յամի 1828, 'ի վանս ուրեք Դոմինիկեան կրօնաւորաց, յանուանեալ տեղւոջն Bosco, (Անտառ), մերձ յԱղէքսանդրիա քաղաք յիշեցելոյ թագաւորութեանն. և ստուգեաց՝ զի մենաստանդ շինեալ էր առ քահանայապետութեամբ Պիոսի Ե (1566–72), որոյ և շնորհեալ էր տեղւոյս այսմիկ բազում մասունս և սպասս սուրբս, ընդ որս համարելի է և Սրբարանս այս Սկեւռեան: Զպատկերսն գծագրեալ և տպագրեալ էր Փափազեանն, իսկ զյիշատակարանն և զամենայն արձանագրութիւնսն ետ տպագրել 'ի վանս մեր 'ի Ս. Ղազար, յամին յիշեցելոյ (1828, 'ի 6 ապրիլի). պատրաստելով և առանձինն իտալերէն լեզուաւ զստորագրութիւն նորին, և զայլ ինչ հայկական աւանդից, և պահէր 'ի ծածուկ, զիպողագոյն ժամու ակն կալեալ 'ի հրատարակել. զնոյն և զրողի բանիցս պատուիրեաց՝ մի 'ի վեր հանել, յորժամ դէպ եղև ինձ տեսանել զնա (յամի 1853) 'ի Դուռին մայրաքաղաքի Բիեմոնդի, և ընդունել 'ի նմանէ զօրինակ մի պատկերացն: Յետ վախճանելոյ նորին անդ՝ և գրուածոցն աւանդելոյ յարքունի մատենադարանն, խպառ անյիշատակ մնայր բազդ չքնաղին Պահարանի. որ և թուի 'ի փակել մենաստանաց և 'ի ցրուել միանձանց Իտալիոյ՝ անկեալ 'ի ձեռս գօշաքաղից, կապտեալ և կողոպտեալ 'ի զարդուց. իսկ նշխարացն սրբոց թերևս 'ի նոյն իսկ 'ի կրօնաւորացն բարձեալ, առ 'ի չըմատնել 'ի ձեռս անսուրբս. յորոյ՝ սակաւ ամօք յառաջ (1880) թափէ և գնէ հարուստ հնասէրն Պազիլեւսքի (Basilewski) 'ի Բարիզ. և ըստ զարմանալի իմն զուգադիպութեան, այն ինչ աւարտեալ էր իմ զստորագրութիւնս Սկեւռայ, եհարց զիս Ա. Գարրիէր (A. Carrière) դրապետ Վարժարանի Արևելեան լեզուաց՝ Բարիզու, (ուսուցիչ կարգեալ հայերէն լեզուի յետ † Տիւլորիէի), զվանաց Սկեւռայ և զյիշատակարանէ Պահարանիս, ծանուցանելով զգիւտ նորին, զորմէ և հանդերձեալ էր գրել տեղեկութիւն, հանդերձ փաւնկ թարգմանութեամբ յիշատակարանին Կոստանդնի, և առաքել ընդ այլոցն գրուածոց 'ի ժողով հնասիրաց, գումարելոց յայսմ ամի (1883) 'ի Լէյտայ քաղաքի Հոլանդիոյ. և տեղեկացեալ մեր փոխադարձաբար զիրացս, նա հրատարակեաց զիւր գրուածն մակագրեալ, Inscriptions d'un Reliquaire arménien, de la collection Basilewski, publiées et traduites par A. Carrière, 'ի մատենին Mélanges Orientaux, զոր հրատարակեցին վարժապետք այնր ուսումնարանի լեզուաց, (յէջս 169–213), և տարաւ առ ժողովականսն 'ի Լէյտա: Ի նոյն աւուրս և գիտնական վերատեսուչ մատենադարանին Դուռինու՝ Վինչենցո Պրոմիս, Vincenzo Promis, յերիւրեալ հրատարակեաց զպատրաստեալն 'ի մերոյս Աստուածատրոյ Փափազեանց ծանօթութիւնս և զպատկերս պահարանին, 'ի կարգի յիշատակարանաց արքունի ճեմարանի քաղաքին, այսու մակագրութեամբ. Reliquario Armeno già esistente nel Convento del Bosco presso Alessandria in Piemonte.[1] Brevi cenni di Vincenzo Promis. 1883. Յետ որոց ահաւասիկ հրատարակի մերս այս մերայոցս, իբրև առաջնոցս յետնորդ եղելոց կամ երևեցելոց. հանդերձ պատկերաւ դռնակաց Սրբարանին, զոր ետուն լուսագրել յիշեալ վարժապետքն, և հաճեցաւ տպագրողն՝ Եռնեստ Լըրու՝ (Ernest Leroux) տալ և մեզ օրինակս՝ որչափ կամեցաք: Պատկերն՝ որպէս գուշակի 'ի վերոյ նշանակեալ չափուցն՝ իբրև երրորդ մասն է մեծութեան բնականին, զորոյ խականն չափ ցուցեն երկոքին պատկերքն Վարդանայ և Հեթմոյ (յէջս 110–1). իսկ Խաչելութեանն՝ զոր 'ի գծագրելոյ Փափազեանին հանաք՝ փոքրագոյն ևս է քան զլուսագրեալսն: Նոյն համազգիս մեր ձևահանեալ էր թրծեալ թղթով և զերկու տողս 'ի սկզբանէ յիշատակարանին Կոստանդեայ, 'ի ցոյց ոպխութեան և չափու տառիցն քանդակելոց, և աւանդեալ մեզ 56 ամօք յառաջ: Եւ մեք փափագեմք՝ 'ի հրատարակելս զայսոսիկ՝ յիշատակի արժանի համարել զնա, իբր՝ զմի 'ի բանասիրաց և քաղաքագիտաց հայազգեաց, որ մեծարոյ և պատուական գտաւ յարքունիս և 'ի յարկս օտարաց, յորոց միջի և հանգչին արդ նշխարք նորա 'ի հողս Դուռինի. այցելութիւն համարեսջի նմա և այս դուղնաքանութիւն:



[1] Ոչ է յայտ ժամանակ գրութեան սորին, որոյ գրիչ ոչ է յաջողեալ քաջ ճշգրտել զբնագիրն, և սխալէ բազում ուրեք: Խորագիրն կամ սկիզբն գրուածոյն է, In tergo Arculæ Sanctarum Reliquiarum hæc rei gestæ narratio sic armenice inscripta legitur. Այսպիսի խորագրօք նւրաքանչիւր մասանց Պահարանին զոր Arcula (տապանակ) անուանեաց, կարգէ զհայերէն գրուածն, առանց թարգմանութեան. և զներքսագոյն կողմանն այսպէս. In fundo item Arculæ sub signo Christi Crucifixi, insitæ sunt Reliquæ, et Sanctorum qui hic adscripti sunt, et aliorum complurium, quorum nomina nos latet, quod vel attrita, vel consumpta penitus est argentea lamina in qua invisa erant, etc.

[1] Զգրուածոյ սորա տալով ծանօթութիւն՝ այլ ոմն գիտնական Վենետկեցի (Carlo Cipolla), 'ի Դիւանական Օրագիրս քաղաքի իւրոյ յայսմ ամի (1883, Archivio Veneto, Պրակ ԾԱ.) կիմաստասիրէ հաւանութեամբ նախ զՎենետիկ լինել ընդունիչ Սրբարանին. իբրու զի յաճախագոյն յայս քաղաք քան յայլ՝ գային Հայք վաճառականք յաւուրս թագաւորութեան Սիսուանայ. և ասէ. Tra le cose possibili, c' è anche questa: che l' oggetto in discorso sia giunto in Italia per la via di Venezia, per la quale era antico il commercio coll'Armenia, e dove fiori e fiorisce una colonia armena importante e gloriosa di splendide tradizioni.



ԼԱՄԲՐՈՒՆ ԲԵՐԴ։